Azg Վազ

10 ՄԱՅԻՍ 2011 ԵՐԵՔՇԱԲԹԻ 83(4702)

ISSN: 1829-1651

Հեռազոտվում է «Ֆուկուշիմա-1»-ի առաջին ռեակտորը

Վթարված «Ֆուկուշիմա-1» ատոմակայանի սեփականատեր TEPCO ընկերության մասնագետները երեկ աշխատանք են սկսել առաջին ռեակտորում, հաղորդում է Կիոդո գործակալությունը:

Ճառագայթման բարձր մակարդակի պատճառով աշխատակիցների տարհանումից հետո ռեակտորն առաջին անգամ բացվել էր մայիսի 5-ին: Մայիսի 8-ին բացվել էին ռեակտորը տուրբինային բլոկից բաժանող դռները: TEPCO-ի տվյալներով, ռադիացիոն բռնկումներ չեն արձանագրվել: «Ամերիկայի ձայն» ռադիոկայանը հաղորդում է, որ ճառագայթման մակարդակը էապես իջել է էներգաբլոկում օդափոխման նոր համակարգի տեղադրումից հետո:

Մասնագետների խնդիրն է վերականգնել մարտի 11-ի երկրաշարժի եւ ցունամիի հետեւանքով ռեակտորում շարքից դուրս եկած հովացման համակարգը:

ՕՐԵՐԻ ՀԵՏ

Արցախի հոգեւոր եւ մշակութային վերազարթոնքը

Երբ տոնում ենք Շուշիի եւ ընդհանրապես Արցախի ազատագրման, անկախության կամ պետականության ստեղծման տարեդարձները, երեւի անզգալաբար անտեսում ենք հաղթանակների մյուս՝ ոչ պակաս կարեւոր կողմը՝ Արցախի հայկականացումը, հաղթանակների հոգեւոր արդյունքները: Մշակույթի, լեզվի, կրոնի վերազարթոնքը:

Խորհրդային-ադրբեջանական ժամանակաշրջանում Հայ եկեղեցու հոգեւոր գործունեության, եկեղեցական կյանքի մասին խոսք անգամ չէր կարող լինել: Թեմական-եկեղեցական կառույցներ, ծես եւ ծիսակատարություն, քրիստոնեական հավատք ու հավատալիքներ գոյություն չէին կարող ունենալ: Դրանց ոչ միայն տիրող աթեիստական գաղափարախոսությունն էր դեմ, այլեւ ադրբեջանական ազգայնամոլ քաղաքականությունը, որն օգտվում էր ուղղափառ մարքսիզմ-լենինիզմի՝ իրեն համար ձեռնտու պայմաններից, տարածաշրջանում եկեղեցական դույզն գործունեությունն անգամ արգելելու:

Նույնը վերաբերում էր նաեւ հայկական դպրոցին: Բացառությամբ մի քանի դպրոցների, ավելի շուտ՝ դրանցում աշխատող նվիրյալ ուսուցիչների, արցախահայության նոր սերունդները զրկված էին մայրենի լեզուն ու գրականությունը սովորելու այնպես՝ ինչպես իրենց հասակակիցները, ասենք՝ խորհրդային Հայաստանում: Թուրքերը պարտադրում էին իրենցը, եւ արցախահայերին մնում էր նախընտրել ռուսաց լեզուն, գրականությունն ու մշակույթը, որն ադրբեջանցիք չէին կարող ճնշել, Մոսկվան թույլ չէր տա... Հատկապես Ստեփանակերտում մատաղ սերունդը սովորում էր ռուսական կամ ռուսացած դպրոցներում: Իսկ շրջաններում եւ գյուղերում հայախոսությունը սահմանափակվում էր հարազատ բարբառախոսությամբ:

Ինչ վերաբերում է մշակույթին, խնդիրն ավելի բարվոք վիճակում չէր: Ամենեւին: Ստեփանակերտը գավառական մի քաղաք էր, իսկ Արցախի մշակութային մայրաքաղաք Շուշին, որ մինչեւ հրդեհվելն ու հայաթափվելը հայտնի էր իր նշանավոր դպրոցներով (Հ. Աճառյանն անգամ այստեղ դաս է տվել), թատրոնով, տպարաններով, երաժշտական դպրոցով եւ այլն, գրեթե ամբողջությամբ թուրքացվել էր:

Չեմ ուզում մանրամասնություններով վկայակոչել այսօրվա վիճակը: Կարճ՝ ազատագրումից եւ անկախ պետականության ստեղծումից ի վեր Արցախը դարձել է հայախոս (խոսքը ոչ թե բարբառի, այլ գրական արեւելահայերենի մասին է), այժմ այնտեղ գործում են 227 հանրակրթական դպրոց, համալսարան, ուսումնական այլ հաստատություններ: Ստեփանակերտը վերածվել է հայկական երգ-երգարվեստի, գրականության ու թատրոնի կարեւոր կենտրոններից մեկը, իսկ Արցախի թեմը, հակառակ աղանդների ներխուժմանը, վերածվել է Հայաստանյայց առաքելական եկեղեցու ամենաախույժ մասը:

Այս ամբողջը, բնականաբար, առաջին հերթին պարտական ենք նույնիսկ՝ 20 տարի առաջ դեռեւս ռուսախոս ու բարբառախոս մեր արցախահայությանը, նրա ինքնազատագրման սխրանքին:

Ռազմական հաղթանակի հետ հիշենք նաեւ ա՛յս հաղթանակը:

Հ. ԱՎԵՏԻՔՅԱՆ

Եթե Եվրատեսիլի ռինգում նոկաուտ եք ուզում, քվե տվեք Հայաստանի օգտին

Մայիսի 7-ին Դյուսսելդորֆում Հռենոսի ափին գտնվող Թոնհալլե նշանավոր համերգասրահի առջեւ փռված 126 մ երկարության կարմիր գորգի վրայով անցան Եվրատեսիլ-2011-ի 43 երկրների պատվիրակությունները, հավատարմագրված զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչները, իսկ հաղթագլուխ Դիրք Էլբերսի, այնուհետ ESC-ի գործադիր տնօրեն **Յոն Օլա Սանդի** (Jon Ola Sand) ողջույնի խոսքից հետո պաշտոնապես բացվեց աշխարհի ամենամեծ երաժշտական շոուի համարումն ունեցող Եվրատեսիլը:

Գերմանական ARD-ի հաշվարկներով այս տարի շոուին հետեւելու է մոտ 120 միլիոն ակնդիր, իսկ Esprit արենայում, որը բացօթյայից վերածվել է լույսերով ողողված փակ տարածքի, գրեթե 36000 հանդիսատես են ակնկալում ESC-ի պատմության մեջ նման մեծ դահլիճ դեռ չի եղել: Դյուսսելդորֆն ուզում է ոչ այնքան զարմացնել, որքան շեշտել առաջատարի իր համբավը. այսպես՝ Հյուսիսային տրիբունայի առջեւ 60 մ լայնությամբ, 18 մ բարձրությամբ LED լուսային պատը թարմացվում է՝ հատուկ մթնոլորտ ապահովելով յուրաքանչյուր մասնակցի ելույթի համար: ARD-ի թղթակցի ասելով, մասնակիցներից շատերը փորձերի ժամանակ էլ չեն պատկերացնում, թե ինչ ասել է արենայի բեմ, ելույթ՝ այսքան մեծ լսարանի առջեւ:

Գերմանիայում ոմանք ծիծաղում են, ոմանք Եվրատեսիլը սպորտային միջոցառում համարում, բայց չգիտես ինչու ամենամեծ շոուի ակնդիրների թիվը գնալով ավելանում է՝ երեւի նաեւ այն պատճառով, որ միավորներ տալու գայթակղությունն այդուհանդերձ լուրջ մրցակցությունը մոտեցնում է խաղի սահմանագծին:

Դեռ առիթ կունենանք գրելու քաղաքի՝ Եվրատեսիլյան գույների մասին, ինչպես նաեւ փոխանցելու տարբեր մարդկանց մեզ հայտնած կարծիքները, Հայաստանի պատվիրակության՝ Քյոլնի Հայ տանն ունեցած ջերմ հյուրընկալության մասին: Այսօր՝ մայիսի 10-ին ESC-ի առաջին կիսաեզրափակիչ փուլին ի թիվս մեր 3 հարեւանների մասնակցում է Հայաստանը. 4-րդ հորիզոնականում բեմ կբարձրանա Էմմին՝ «Բում-բում» երգով: Գերմանական մամուլը երգի մասին դրական տրամադրությամբ է խոսում, ավելի շատ ներկայացնելով 2010-ի հաղթող Լենա Մայեր Լանդհութի մամուլի ասուլիսներում տված գնահատականը՝ Հայաստանի «Բում-բումը» մեր ավտոբուսում միշտ ենք երգում»(«էքսպրեսս») կամ «Հայաստանի երգը ամենաուրախ եւ cool երգն է»(«Ֆրանկֆուրտեր նոյե փրեսսե»): Հաջողություն մաղթելով Էմմիին, մեր աշխարհասփյուռ ընթերցողներին հիշեցնենք, որ մաղթանքներին զուգահեռ Հայաստանից դուրս ապրողները կարող են Հայաստանին եզրափակիչ փուլ տանել իրենց անհոգնել sms քվեարկություններով:

Մինչ այսօր երեկոյան կունկնդրեք Էմմիի ձայնն ու կդիտեք շոուն, որ նրա հետ միասին իրականացնում են Արփին (բեքվոկալ), 4 հույն պարողները՝ բեմադրիչ Արմինե Զարյանի ղեկավարությամբ, վարսահարդար Սերժ Հարությունյան եւ դիմահարդար Մերի Պողոսյան ամուսնական զույգը, մասնակից դարձեք մեր՝ Էմմիի, Նադեժդա Սարգսյանի եւ Հայաստանի պատվիրակության ղեկավար Գոհար Գասպարյանի հետ մայիսի 6-ին կայացած զրույցին:

Տես էջ 4

Աղամ Շիֆը հանդես է գալիս նոր նախաձեռնությամբ

Թուրքական ժխտողականության մարտնչող բնույթը Թուրքիայի սեւեռուն ուշադրության առարկան է դարձնում Հայոց ցեղասպանության ճանչման նախաձեռնությունները, որոնց իսկույն արձագանքում են թուրքական լրատվամիջոցները: Երեկ «Ցեղասպանության բանաձեւը վերսին կներկայացվի» վերնագրով ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի հայամետ կոնգրեսական Աղամ Շիֆի նախաձեռնությանն է անդրադարձել «Հաբեր 7» հեռուստալիքը:

Ըստ հեռուստալիքի կայքէջի, Աղամ Շիֆը, մասնակցելով Կալիֆորնիա նահանգի Փասադենա քաղաքում կազմակերպված միջոցառմանը, խոսել է Կոնգրեսի առաջիկա նստաշրջանում նախատեսվող ձեռնարկումների մասին: Դրանք ենթադրում են Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձեւի վերսին Ներկայացուցիչների պալատի օրակարգ մտցնելը, Հայաստանի դեմ Թուրքիայի կիրառած շրջափակման վերացումը, թուրքահայ համայնքին պատկանող կալվածքներին եւ փոխրամասնությունների իրավունքներին առնչվող խնդիրների հաղթահարումը:

Հ. Ղ.

«Հայերը սպանել են թուրքերին, իսկ հրդեհը դավաճաններ են»

Մինչ ապրիլի 24-ին «Ռասիզմին եւ ազգայնականությանը ո՛չ» նախաձեռնությունը Ստամբուլում, Անկարայում, Բոդրումում եւ Դիարբեքիրում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված միջոցառումներ էր կազմակերպում, նույն օրը Սկյուտարի «Բուրհան Ֆելեքի» անվան միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտներին ցուցադրվում են լուսապատկերներ:

Լուսապատկերների ցուցադրությունը համարելով սկանդալային, «Էթին» լրատվական գործակալությունը նշում է, որ աշակերտներին այդ օրը հանել են դասից եւ դպրոցի դահլիճում «ազգային անվտանգության» առարկայի շրջանակում ցուցադրել իբր հայերի եւ հրդեհի զոհը դարձած դիակների պատկերները: Աշակերտներից շատերը սարսափահար աչքերն են փակել, հրաժարվելով դիտել լուսապատկերների ցուցադրությունը, սակայն ուսուցիչը սաստել է նրանց, թե բացակա են համարվելու: Ավելին, նա լուսապատկերների ցուցադրմանը զուգընթաց պարզաբանումներ է արել, ասելով, որ «հայերը սպանել են թուրքերին, իսկ հրդեհը դավաճաններ են»:

Ուսուցիչը, որի անունը չի նշվում, անմիջապես լռեցրել է այն աշակերտներին, որոնք հարց են տվել. «Հրանտ Դինքը հայ լրագրող էր: Նրան ովքե՞ր եւ ինչո՞ւ են սպանել»: Նշելով այս ամենի մասին, նշված գործակալությունը հիշեցնում է մեկ այլ սկանդալի մասին՝ կապված «Սարի աղջիկ. Հայկական հարցի ներքին ծալքերը» տեսասկավառակի հետ, որը 2009-ին նույնպես ցուցադրվել է դպրոցներում, ընդ որում՝ Ստամբուլի նահանգապետարանի ազգային կրթության վարչության կարգադրությամբ:

Հ. Ղ.

Նախագահը Ստամբուլ չմեկնեց, այլ՝ Շուշի

Երեկ Ստամբուլում մեկնարկեց զարգացող երկրների վերաբերյալ ՄԱԿ-ի 4-րդ համաժողովը: Այն կընթանա մինչեւ մայիսի 13-ը, որին մասնակցում են աշխարհի 192 երկրների ներկայացուցիչներ, մի քանի հազար գիտնականներ, հասարակական կազմակերպությունների աշխատակիցներ: Ինչպես տեղեկանում ենք ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ից՝ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի Մունը, ողջունելով մասնակից պատվիրակներին, նշել է, որ 10 տարին մեկ անցկացվող այս խորհրդաժողովը հնարավորություն է զարգացող երկրների համար՝ մշակելու տնտեսական զարգացման լիարժեք եւ երկարաժամկետ մեթոդներ: Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլն, իր հերթին, մասնակիցների ուշադրությունն է հրավիրել հանգամանքին, որ չնայած աշխարհի բնակչության 13 տոկոսը թույլ զարգացած երկրների բնակչությունն է կազմում, այդուհանդերձ՝ այդ երկրների տնտեսության չափաբաժինը՝ համաշխարհային տնտեսության մեջ կազմում է միայն 1 տոկոսը:

Ինչպես արդեն տեղեկացրել ենք, ՄԱԿ-ի այս խորհրդաժողովին, ի թիվս բազմաթիվ այլ երկրների նախագահների, չեն մասնակցում նաեւ Իսրայելի ու Հայաստանի նախագահները: Մերժելով նախագահ Գյուլի հրավերը Շիմոն Պերեսը ընդգծել էր, որ այդ օրերին Իսրայելում նշվում է ազգային տոն, եւ ինքը չի կարող բացակայել երկրից: Հայաստանի նախագահն, իր հերթին, չմասնակցելով Ստամբուլի խորհրդաժողովին, երեկ մասնակցեց Շուշիի ազատագրմանը նվիրված տոնակատարություններին:

Հ. Ա.

Էջմիածնի Վաչե եւ Թամար Մանուկյանների անվան մատենադարանի բացումը՝ աշնանը

Ազգային ավանդական ճարտարապետություն՝ արդի լուծումներով, համահունչ ու ներդաշնակ տարածին:

Երբ երկու տարի առաջ **Արտակ Ղուլյանին** առաջարկեցին Էջմիածնի մատենադարանի շենքի նախագիծը ստեղծել, արդի եւ հին ճարտարապետության ներդաշնակ միաձուլմամբ պատկերացրեց մատենադարանի տեսքը:

«Համարձակ լուծումներ, որոնք պետք է համահունչ լինեն շրջակա միջավայրին՝ Գեւորգյան ճեմարանին, Մայր տաճարին եւ Հրեշտակապետաց եկեղեցուն: Երեք կառույցները պետք է դառնան մի ամբողջություն, մեկի դիրքը չպետք է գերազանցեր մյուսին, իհարկե, կենտրոնում թողնելով Մայր աթոռը», ասում է ճարտարապետը:

Մատենադարանը, որ կառուցվում է սփյուռքահայ բարերարներ Վաչե եւ Թամար Մանուկյանների (Լոնդոն) օժանդակությամբ եւ կրում նրանց անունը, ներառում է ազգային ճարտարապետության բազմաթիվ տարրեր՝ կամարներ, գմբեթներ, զարդանախշեր, որոնց տրվել են նորարարական լուծումներ:

Ճարտարապետն առանձնացնում է հատկապես շենքի ճակատի հատվածը. զարդանախշերը բացված գրքի, մագաղաթի էջերի տպավորություն են թողնում:

Երկհարկանի մատենադարանում կգործեն ժամանակակից գրադարան, հին ձեռագրատուն, հանդիսությունների սրահ, գրադպահոց, մատենագիտական աշխատանքներ:

ի համար նախատեսված սենյակներ եւ ցուցասրահներ:

Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի մամլո դիվան **Վահրամ քահանա Մելիքյանի** փոխանցմամբ, թեպետ խորհրդային տարիներին իշխանությունները սիստեմատիկաբար Մայր աթոռի բազմաթիվ արժեքավոր ձեռագրեր վերցրեցին, որը հիմք հանդիսացավ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ստեղծմանը, սակայն Մայր աթոռը շարունակեց ձեռագրեր ձեռք բերել, որոնց թիվն այսօր գերազանցում է 3.000-ը:

«Ձեռագրերը, բացառիկ գրքերն ու թարգմանությունները պահվում էին Գեւորգյան ճեմարանի գրադարանում, վեհարանի գրադարանում, գանձատանը գործող գրադարանում եւ ձեռագրատանը: Տավոր, տարիներ շարունակ Մայր աթոռի հսկայական գրադարանից օգտվելու հնարավորություն չկար: Հետեւաբար, որոշում կայացվեց կառուցելու մատենադարան, որը հնարավորություն կընձեռի գիտնականներին, ուսանողներին օգտվել Մայր աթոռի հարուստ ֆոնդից», «**Ազգ**»-ի հետ զրույցում ասաց տեր Վահրամը:

Բացառիկ ձեռագրերը բազմաթիվ են: Տեր Վահրամն առանձնացնում է հատկապես Գրիգոր Տաթեւացու ավետարանը:

Շենքի բացման արարողությունը տեղի կունենա աշնանը: Այժմ մատենադարանում ընթանում են հարդարման աշխատանքներ. բարեկարգվում է տարածքը: Ճարտարապետի գնահատմամբ՝ ժամանակի ընթացքում այն կդառնա հոգեւոր կենտրոնի յուրահատուկ բաղադիչներից մեկը:

Հ. Հ.

Էջմիածին-Երեւան

Ազատամարտիկներին պետք է հիշել ամեն օր

Հաղթանակի եւ Շուշիի ազատագրման օրվա առթիվ նախագահ Սերժ Սարգսյանի հանձնարարությամբ Երեւանի քաղաքապետարանը երկու նոր բնակարան է հատկացրել Արցախյան պատերազմի մասնակից, ազատամարտիկ, 2-րդ խմբի զինվորական հաշմանդամ Գագիկ Հովհաննիսյանի բազմազավակ ընտանիքին: Ազատամարտիկ Գագիկ Հովհաննիսյանը դեռ մարտի դաշտում ուխտել է 12 արու զավակ ունենալ՝ ի հիշատակ ռազմի դաշտում զոհված 12 մարտական ընկերների: Տղաներն առայժմ 7-ն են: Մարտի 31-ին բնակարանային պայմանների բարելավման խնդրանքով Հովհաննիսյանը դիմել էր պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանին:

Երեկ բազմազավակ ընտանիքի հորը Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում գտնվող երկու նոր բնակարանի բանալի հանձնեց քաղաքապետ Կարեն Կարապետյանը:

«Թող ձեր երեխաներն աղբեն խաղաղ պայմաններում եւ դառնան երկրի արժանապատիվ քաղաքացիներ: Պարտական ենք ձեզ՝ Արցախյան ու Հայրենական պատերազմների մասնակիցներին: Այդ պարտքը նման է ծնողի նկատմամբ ունեցած երեխայի պարտքին, որը հնարավոր չէ մարել», ասել է Կարապետյանը:

Քաղաքապետը նոր բնակարանը կահավորելու համար ազատամարտիկի ընտանիքին նվիրեց կենցաղային տեխնիկա:

Անշուշտ, նման նախաձեռնությունները գովելի են եւ արժանի խրախուսանքի: Սակայն սոցիալապես անապահով ազատամարտիկին չպետք է հիշել միայն տոնից տոն՝ տարվա մեջ մեկ-երկու անգամ: Նրանք ու նրանց բազմանդամ ընտանիքները ամենօրյա հոգածության եւ խնամքի կարիք են զգում:

Հաշվառված մի քանի տասնյակ հազար սոցիալապես անապահով եւ հաշմանդամություն ունեցող ազատամարտիկների համար առայժմ իշխանությունները չեն կարողանում բարեկեցիկ պայմաններ ստեղծել եւ միջոցներ գտնել նրանց երեխաների կյանքն ավելի լուսավոր դարձնելու:

Հ. Հ.

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը շնորհավորական ուղերձ է հղել Հաղթանակի եւ խաղաղության տոնի առթիվ

«Սիրելի՛ հայրենակիցներ, հարգելի՛ վետերաններ:

Շնորհավորում եմ ձեզ Հաղթանակի եւ խաղաղության տոնի կապակցությամբ:

Մենք տասնամյակներ շարունակ նշում ենք այս տոնը, որը մեր հայրերի ու պապերի սխրանքի արդյունք է: Հաղթանակ, որ բազում արհավիրքներ տեսած Հայաստանին բերեց այնքան սպասված խաղաղություն, բացեց առաջընթացի նոր դռներ, նոր՝ կիրթ ու առողջ սերունդ դաստիարակելու հորիզոն. սերունդ, որ հավատարիմ էր լինելու իր նախնիների երդմանը եւ կերտելու էր նոր Հայաստան:

Հայության համար երկրորդ աշխարհամարտն իսկապես Մեծ Հայրենական պատերազմ էր: Հանուն հաղթանակի թե՛ Սփյուռքը, թե՛ Հայաստանը տվեցին՝ ինչ կարող էին: Եվ տարբեր ճակատներում, ե՛ւ դիմադրության ու պարտիզանական շարժումներում, ե՛ւ թիկունքում հայորդիները անձնվիրությամբ ու հերոսությամբ պսակեցին իրենց անունը:

1992 թվականի մայիսի 9 կրկին դարձավ խորհրդանիշ, այս անգամ՝ հայության հաղթանակի, կամքի ու անմահության խորհրդանիշ:

Այսօր եւ մեկընդմիշտ մենք լիապարտ տոնելու ենք մեր փառավոր հաղթանակը, որ բարու հաղթանակն է չարի եւ բարբարոսության նկատմամբ: Արցախի պատմական մայրաքաղաքի ազատագրմամբ հայ ռազմիկը վերադարձավ որպես նոր գիտակցություն եւ որպես նոր գործոն: Նրանք, որ անմահացան հերոսամարտում, շարունակում են իրենց մեծագույն առաքելությունն իբրեւ բարոյական եւ քաղաքական լիցք:

Շուշիի ազատագրումն այն բեկումն էր, որ ցույց տվեց նախ մեզ, ապա մնացյալ աշխարհին, թե ինչ ասել է «դասեր քաղած հայ»: Մենք լռեցրել ենք եւ, եթե հարկ լինի, այսուհետ ե՛ւս լռեցնելու ենք բոլոր այն կրակակետերը, որտեղից կրակում են մեր երեխաների եւ ծնողների վրա: Բայց ես հուսով եմ, որ դրա կարիքն այլեւս չի լինելու, ինչի հիմնական երաշխավորներն են հայրենի երկրի խաղաղությունը պահպանող մեր զինվորները:

Կրկին շնորհավորում եմ բոլորիս տոնի առթիվ: Ամենամեծ հաղթանակը խաղաղությունն է եւ նրա բարի պտուղները: Մաղթում եմ բոլորիս, որ միասին կարողանանք առավելագույնս իմաստավորել խաղաղության ու կայունության յուրաքանչյուր տարին հանուն մեր գալիք սերնդի, որ վաղը հավատարիմ է լինելու իր նախնիների երդմանը եւ շարունակելու է կերտել նոր՝ ավելի լավ Հայաստան»,ասված է երկրի ղեկավարի խոսքում»:

Հայաստանի նախագահը Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի կապակցությամբ շնորհավորանքներ է հղել նաեւ ՌԴ նախագահին ու վարչապետին: Իր հերթին՝ Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւը շնորհավորել է Հայաստանի նախագահին՝ նշելով, որ այն տարիներին մեր ժողովուրդների համախմբված պայքարը էլ ավելի կամրապնդի հայ-ռուսական դաշնակցային հարաբերությունները ու փոխշահավետ գործակցությունը մեր օրերում»: Մեդվեդեւը շնորհավորական ուղերձներ է հղել նաեւ ԱՊՀ երկրների ղեկավարներին, այդ թվում՝ Աբխազիային եւ Հարավային Օսիային, ինչպես նաեւ «վրաց ժողովրդին»:

Թոմաս Համարբերգը՝ Հայաստանի մասին

«Հայաստանում 2008 թվականի մարտյան դեպքերի հետեւանքների վերացման ուղղությամբ որոշ նշանակալից քայլեր կատարվել են, բայց ավելին պետք է արվի իշխանությունների կողմից հասարակության մեջ երկխոսության ամրապնդման եւ վստահության վերականգնման ուղղությամբ», հայտարարել է Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար **Թոմաս Համարբերգը** իր հրապարակած զեկույցում, այս մասին տեղեկանում ենք Եվրոպայի խորհրդի պաշտոնական կայքէջից: Հիշեցնենք, որ դեռ հունվարին, երբ հանձնակատարն այցելել էր Հայաստան, հայտարարել էր, որ այցի արդյունքում հանդես է գալու զեկույցով: Զեկույցում անդրադարձ է կատարվում 2008-ի մարտյան դեպքերին, խոսքի ու հավաքների ազատությանը, ինչպես նաեւ բանակում մարդու իրավունքների խնդրին:

Հանձնակատարը կարծում է, որ մարտի 1-ին զենքի կիրառումը անթույլատրելի էր, եւ 10 զոհերի սպանությունների բացահայտման գործընթացը արդյունավետ չի եղել:

«Դեռեւս հայտնի չէ, թե ովքեր են հանցագործները: Հայաստանի իշխանությունները պետք է վճռական քայլերի դիմեն, հետաքննություն իրականացնեն ու պատժեն մեղավորներին: Տասը զոհերի ընտանիքները իրենց հարազատների կորստի դիմաց պետք է փոխհատուցում ստանան եւ խորապես տեղեկացված լինեն հետաքննության ընթացքի», նշել է Համարբերգը՝ այս համատեքստում ողջունելով նախագահ Սերժ Սարգսյանի վերջին հանձնարարությունները՝ մարտյան իրադարձությունների նոր քննություն սկսելու մասին: Եթե մարդու իրավունքների հանձնակատարը հույս է հայտնել, որ նախագահի հանձնարարականը կվերածվի կոնկրետ գործընթացի՝ մեղավորներին հայտնաբերելու եւ պատժելու առումով: Նա նկատել է, որ թեպետ մարտյան իրադարձություններից հետո ձերբակալվածներից շատերն ազատ են արձակվել, սակայն մտահոգություն է հայտնել, որ կան մի քանիսը, որոնք շարունակում են մնալ բանտերում, եւ կոչ է արել իշխանություններին, որ նրանց եւս ազատ արձակեն: Ողջունելով վիրավորանքի եւ զրպարտության մասին դրույթների ապաքրեականացումը՝ Թոմաս Համարբերգը միաժամանակ իր անհանգստությունն է հայտնել եւ հայտարարել, որ լրատվամիջոցներից պահանջվող փոխհատուցման չափը անհիմն բարձր է ու չպետք է այդքան մեծ լինի: Միեւնույն ժամանակ նա նշել է, որ լրագրողական էթիկան եւ ինքնակարգավորումը պետք է խրախուսվեն: «Հավաքների ազատության իրավունքի կիրառումը Հայաստանում դեռեւս մնում է մտահոգության թեմա: Պետք է անմիջապես դադարեցվեն խաղաղ հավաքների նկատմամբ անօրինական ոտնձգությունները: Առանցքային է, որ հավաքների ժամանակ ոստիկանական ուժերի վարքը եւ գործողությունները լինեն մարդու իրավունքների չափանիշներին համապատասխան», նշված է զեկույցում:

Համարբերգը Հայաստանի իշխանություններին հորդորել է նաեւ վերանայել խոսքի ազատությանը վերաբերող օրենսդրությունն ու դրա կիրառությունը: Նա նաեւ անդրադարձել է խաղաղ պայմաններում բանակում տարբեր պատճառներով գրանցված մահերին:

«Հայաստանի իշխանությունները պետք է կրկնապատկեն իրենց ջանքերը եւ բացառեն ստորացման վատագույն դեպքերը բանակում եւ վերջ տան սադրողների եւ պատասխանատու հրամանատարների անպատժելիությանը», հայտարարել է Թոմաս Համարբերգը՝ ընդգծելով, որ այլընտրանքային ծառայության օրենքը վերանայելը հրամայական է դարձել:

Հ. Ա.

Հայաստանի պատմության ադրբեջանական նենգափոխումը եւ գիտական ճշմարտությունը

Երախտագիտությամբ կարդացի մեծապատիվ պատմաբան եւ քաղաքագետ Ն. Հովհաննիսյանի ահազանգող հոդվածը ու սպասում եմ նմանատիպ լուսաբանող աշխատանքների հրատարակմանը՝ անգլերեն եւ ռուսերեն: Այլապես ստացվում է, որ «մենք պարում ենք ու մենք ծափ տալիս»: Մինչդեռ ԱՄՆ-ում այնքան զորավոր է դարձել ադրբեջանական քարոզչությունը, որ ամերիկացիները հայերին համարում են բռնազավթիչներ:

Ցավալին այն է, որ մամուլում, անգամ հայկական, Արցախը քարտեզներում ներկայացվում է հեռու եւ առանձին: Ցանկալի է, որ հաճախ հրատարակվեն նմանատիպ հոդվածները անգլերենով, պատմական քարտեզներով օսարալեզու մեծածավալ մամուլում: Նկատի պետք է առնել, որ ամերիկացիները բնիկներ չեն եւ նրանց հոգեբանությունն այլ է:

Մ. Վ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱԻԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:

Մեկնաբան

Կվերափոխվե՞ն հայ գործարարները

Բիզնեսը պետք է շահութաբեր լինի, բայց ...

Գործարար միջավայրի բարելավման մասին վերջերս շատ է խոսվում եւ նաեւ որոշ քայլեր էլ արվում են: Մասնավորապես, հարկային բարեփոխումների արդյունքում զգալիորեն կրճատվել են ներկայացվող հաշվետվությունները, դրանց որոշ մասի ներկայացման ժամկետները երկարացվել են՝ ամսականից դառնալով եռամսյակային, կրճատվել են լիցենզավորման ենթակա գործունեության տեսակները, հեշտացվել է ձեռնարկություն գրանցելու գործընթացը եւ այլն: Պետք է հուսալ, որ սկսված գործընթացը շարունակություն կունենա, քանի որ փոփոխման ենթակա անտրամաբանական պահանջներ՝ տնտեսական օրենսդրության մեջ դեռ շատ կան:

Իհարկե, լավ կլիներ, որ այս գործընթացը սկսվեր այն ժամանակ, երբ այդ մասին վարչապետ նշանակվելուց հետո հայտարարեց Տիգրան Սարգսյանը: Եթե 2-3 տարի առաջ դա տեղի ունենար, բավականին առաջ գնացած կլինեիք այս հարցում: Մինչդեռ այժմ հետաքնդողի դերում ենք, քանի որ մեր հարեւան Վրաստանը շատ կարճ ժամկետում կատարեց այդ բարեփոխումները: Այդուհանդերձ, կատարվածը կատարված է եւ անհրաժեշտ է առաջ շարժվել: Այստեղ, սակայն, հարկ է լուծել մի շատ կարեւոր հարց, առանց որի ոչ մի բարեփոխում տեղի չի ունենա: Խոսքը պետության եւ բիզնեսի՝ միմյանց նկատմամբ վստահության մասին է:

Գաղտնիք չէ, որ պետությունն ու բիզնեսը Հայաստանում, մեղմ ասած, միմյանց նկատմամբ ազնիվ չեն: Պարզապես հիշեցնեմ, որ դրա հետեւանք է կոռուպցիան հարկային, մաքսային եւ ստուգման իրավասություններ ունեցող այլ պետական մարմիններում, սվերային ահռելի շրջանառությունը, որը փորձագիտական տեսակետներով կազմում է 30-50 տոկոս: Հիմա, ի՞նչ տեղի կունենա, եթե պետությունը բիզնեսի նկատմամբ փոխի իր մոտեցումը, որի առաջին նշանները երեւում են եւ որն անհրաժեշտ պայմանն է փոխադարձ վստահության ձեւավորման համար: Պատրաստ է բիզնեսը եւս նույն կերպ վարվել, թե՞ բարեփոխումները նրա համար եկամուտները թաքցնելուն նպաստող գործոն կդառնա: Խոսքը հայ գործարարներին բնորոշ մտածելակերպի հենց նման դրսեւորումներից ազատվելու մասին է:

Առաջին նման դրսեւորումն է՝ մերժել օրենքին ենթարկվելու որեւէ պահանջ, որը սովորաբար խախտվել է նրանց կողմից: Խոսենք օրինակներով: Առեւտրականները եւ մասնավորապես տնավաճառների, տարիներ շարունակ կատաղի պայքար էին մղում ՀՌՄ-ների տեղադրման դեմ, բողոքելով օրինական դաշտ մտնելու եւ հարկային հաշվառման մեջ ներառվելու պետության պահանջի դեմ: Այսինքն, ըստ էության, նրանից պահանջելով պահպանել աղտոտի դաշտում գործելու իրենց «սրբազան» իրավունքը: Նույնն էր նաեւ մայրաքաղաքի փողոցային առեւտրականների պահանջը՝ թույլատրել գործելու որտեղ իրենց համար է եւ ինչպես իրենց համար է:

Մեկ այլ օրինակ ձկնաբուծական տնտեսություններինն է: Վերջիններս մի քանի տարի է, ինչ առանց որեւէ սահմանափակման օգտագործում են Արարատյան դաշտի ընդերքի ջրերը՝ չվճարելով դրա համար: Սակայն, երբ պահանջ դրվեց ջրաչափեր տեղադրել օգտագործված ջրի համար, քանի որ սկսել են սպառվել անգամ ընդերքի ջրերի կայուն պաշարները, իսկ ջրի պակասն արդեն զգալ է տալիս բնակավայրերում, ձկնաբույծները սկսեցին կատաղի պայքարը դրա դեմ: Սա այն դեպքում, երբ նրանք պետք է վճարեն իրենց օգտագործած ջրի ընդամենը 5 տոկոսի դիմաց եւ այն էլ 1 խմ-ն 1 դրամով, երբ գյուղատնտեսական տնտեսությունների համար այդ ջրի գինը 11 դրամ է:

Վերոնշյալ երեւույթը կապված է մեկ այլ հոգեբանական գործոնի հետ: Հայաստանում գոյություն չունի շահութաբեր բիզնես: Հայաստանում բիզնեսը պետք է լինի կամ գերշահութաբեր՝ շատ կարճ ժամկետում, կամ ընդհանրապես չլինի: Սա պարզապես ախտանիշ է դարձել հայ գործարարի համար:

Տեղացի եւ միջազգային փորձագետների վկայությամբ, Հայաստանում 50 տոկոս շահութաբերությամբ աշխատող բիզնեսը չնչին մասն է կազմում: Առնվազն կրկնակի շահութաբերությունն է ընդունելի հայ գործարարի համար՝ սկսած շուկայում կանաչի վաճառողից մինչեւ սուպերմարկետների սեփականատերեր: Երբ որոշակի պետական կամ հասարակական շահ՝ հարկեր վճարելու կամ ջրաչափ տեղադրելու պահանջի տեսքով, շահույթի չափի փոքր-ինչ նվազման պատճառ է դառնում, պարզապես կատաղություն է առաջացնում նրանց մոտ:

Քաղաքակիրթ երկրներում քաղաքակիրթ բիզնեսի շահութաբերությունը հիմնականում 5-10 տոկոսի սահմաններում է: Զարգացած երկրներում գիտակցում են, որ ցածր շահութաբերությունը կայուն շահութաբերություն է, որ իրենց վճարած հարկերով ստեղծված պետության ու բնակչության բարեկեցությունը իրենց բիզնեսի զարգացման գլխավոր երաշխիքն է: Իսկ մեզանում գերակայում է հայկական չտեսությունը՝ հյուրանոցների եւ հանգստյան տների խելամիտ գների, տոներից առաջ՝ արտադրողների եւ ներմուծողների հետ համաձայնեցված առեւտրային օբյեկտներում անհիմն թանկացումների, թուրքական կամ չինական ապրանքների ձեռք բերման գները մի քանի անգամ գերազանցող վաճառքի գների, աշխատանքային տարրական պայմաններից զերծ աշխատակիցների դաժան շահագործման, ցածր աշխատավարձերի, դրանց չվճարելու, արտադրողների կողմից էկոլոգիական ծախսերը չկատարելու եւ բնությանը պատճառվող վնասի եւ բազմաթիվ այլ գործոնների տեսքով: Այս ամենին չմոռանանք ավելացնել ոչ միայն պետության, այլեւ միմյանց նկատմամբ բիզնեսի անվստահության մասին՝ պայմանավորված մեկը մյուսին «գցելու» հին հայկական սովորությամբ:

Կվերափոխվե՞ն հայ գործարարները, կազատվե՞ն իրենց այս մտածողությունից: Այս հարցերի պատասխաններից է կախված կհաջողվի՞ բարելավել գործարար միջավայրը Հայաստանում, հասնել պետության ու բիզնեսի միջեւ փոխադարձ վստահության մթնոլորտին, թե՞ ոչ:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Մ. ԵԱՇԱԵԳԵՐ

Սարգիս Պետեյանը հռչակվել է 2011-ի «Տարվա հայ»

«Եկեղեցին իմ կյանքի անբաժան մասն է եղել մանկությունից սկսած: Մենք մեծացել ենք հավատի եւ մշակութային ավանդույթները պահպանելու ոգով», նշել է Ուայկոֆի (Նյու Ջերսի) իր տանը կայացած հանդիպման ժամանակ Երուսաղեմի հայկական թաղամասում հասակ առած բարերար Սարգիս Պետեյանը, ում Ամերիկայի հայկական եկեղեցու արեւելյան թեմը հռչակել է «Տարվա հայ»: Քեմբրիջի Սբ Երրորդություն հայկական եկեղեցին ապրիլի 29-ին Բոստոնի «Պարկ պլազա» հյուրանոցում կայանալիք գալա-խրախճանքի ժամանակ նրան շնորհվել է այդ մրցանակը:

Երուսաղեմի Սրբոց Թարգմանչաց վարժարանն ու ֆրանսիական քոլեջն ավարտելուց հետո Պետեյանը 1959-ին տեղափոխվում է Միացյալ Նահանգներ, որտեղ ուսումը շարունակում է Նյու Յորքի համալսարանում: Այնուհետեւ Հյուսիսային Նյու Ջերսի մեկնելով, Ֆեր Լոուն (Նյու Ջերսի) Սբ Լեւոն եկեղեցու ծխական խորհրդի գանձապահն է դառնում եւ մասնակցում եկեղեցու գործունեության ընդարձակման ծրագրերին:

Հայաստան առաջին այցելության ժամանակ 1985-ին՝ մասնակցելու երջանկահիշատակ Վազգեն Ա կաթողիկոսի ձեռնադրման 30-ամյակի տոնակատարություններին, ծանոթանում է Գարեգին եպս. Ներսիսյանի հետ, որը հետագայում դառնալու էր Ամենայն հայոց 132-րդ կաթողիկոսը: Գարեգին Բ կաթողիկոսի հետ հետագա համագործակցության արդյունքում Պետեյանը մեծապես օժանդակել է Սեւանի Վազգենյան ճեմարանի ընդարձակման ծրագրերին: Այնուհետեւ ստանձնել է Գյումրիում դպրոց կառուցելու ծրագիրը, որը «Վարդանանց ասպետների» նախաձեռնությունն էր: Հայաստանում կատարած 3-րդ մեծ բարերարությունը Վանաձորում Սբ Գրիգոր Նարեկացի եկեղեցու կառուցումն էր, որն օծվեց 2005-ին: Երիտասարդների դաստիարակությանը նպաստելու նպատակով նա նաեւ Վանաձորում հիմնել է Հայորդաց տունը, որը ծառայում է ավելի քան 600 պատանի-պատանուհիներին:

Նման բարեգործությունների համար 2002-ին Պետեյանն արժանացել է «Սբ Գրիգոր Լուսավորիչ», իսկ 2005-ին՝ «Սբ Ներսես» եկեղեցական բարձրագույն մեդալներին՝ ձեռամբ Գարեգին Բ կաթողիկոսի: Բայց ամենամեծ պատիվը Պետեյանը համարում է 2008-ին սբ մյուռոնի օրհնության կնքահայրը դառնալու հնարավորությունը, որն իրեն վերապահված էր դարձյալ Գարեգին Բ կաթողիկոսի կարգադրությամբ: Պետեյանը հայ հավատացյալի իսկական տիպար է:

Հ. Ծ.

ՀՀ-ում առեւտուրը՝ շահամոլության ասպարեզ

Զգիտեմ՝ ՀՀ-ում առեւտուր իրականացնող որեւէ մեկը կվրդովվի՞ արդյոք նման գնահատականից եւ տողերիս հեղինակին մեզանում արդեն սովորական դարձող դատական կարգով պատժի որեւէ միջոցի կներկայացնի՞, այսուհանդերձ, անկարող լինելով զսպել վրդովմունքս, հոգումս կուսակվածը վերապատմելու եմ:

Շաբաթներ առաջ «**Ազգ**»-ում տպագրածս «Թալանի ու ողջախոհության արանքում» հոդվածում անդրադարձել էի ՌԴ-ից ներմուծված վարսակի շիլայի մրգային տարբերակի գնին: Սուպերմարկետներից մեկից գնումներ կատարելիս նկատելով համապատասխան շիլայի փաթեթը՝ վերցրի: Տանն արդեն ինչ-որ կասկած առաջացավ հսկիչի գանձումից. նայելով կտրոնի տվյալները նկատեցի, որ վարսակի 35-գրամանոց 10 փաթեթներից բաղկացած տուփի դիմաց վճարել եմ 1690 դրամ, 1 կգ-ի արժեքը ստացվում էր 5000 դրամից ավելի: Եղա սուպերմարկետում եւ բաժնի մենեջերին խնդրեցի կանոնավորել գնապիտակը, քանի որ տուփի տակ նշված էր 169 դրամ գին: Հասա միայն նրան, որ տուփի ներսի 10 փաթեթներից մեկն առանձնացվեց. ավելին անել չհաջողվեց: 1 կիլոգրամի առումով քաղաքացուս կողմից սուրհանակ որակվող 5000 դրամ գնին ի պատասխան մենեջերն ասաց, որ շուկայական հարաբերություններ են, կարող եմ այլ առեւտրի կետերից օգտվել, այլ ապրանքատեսակ գնել, որի դեմ ոչինչ ասել չես կարող. բակլան իմն է, խաբած եմ ցանում հանրահայտ արտահայտությունը որոշակի հիմք ունի:

Խնդրեմ՝ դիտեք Ավստրիայի Գրաց քաղաքի «Շպար» սուպերմարկետից կատարածս նույնատիպ ապրանքի նկարը: 1 կգ կշռող մրգային հարուստ վարսակի դյուրաեփ շիլայի դիմաց վճարել եմ 1 եվրո 49 ցենտ, ՀՀ արժույթի վերածած մոտ 800 դրամ: Սա մանրածախ առեւտրի ցանցում, ուր եւ հարկեր են վճարում, եւ աշխատողներին եվրոպական մակարդակով աշխատավարձ տալիս, եւ շահույթ ապահովում: Նեղություն քաշեք եւ ինքներդ հաշվեք, թե ինչ գնով կարելի է այս մթերքը ձեռք բերել եվրոպական արտադրողից եւ այն ՀՀ հասցնելով շահույթով վաճառել: Տողերիս հեղինակն իր մոտավոր պատկերացումները ներկայացրեց առնվազն 10 ծանոթ ընկերների, ովքեր 1 կիլոգրամի դիմաց 1000 դրամը որոշակի շահույթ ապահովող գին համարեցին: Եվ հարցը, թե ինչո՞ւ են մեր ներմուծողները ապրանքներ ձեռք բերում բարձր գներ պահանջող երկրներից, հնչում է ինքնաբերաբար: Հակառակ պարագայում ճիշտ են նրանք, ովքեր համոզված են, որ ներմուծումներն իրականացվում են էապես ցածր գներով, վաճառվում ասղաբաշխական շահույթներով: Առավել սուրհանակ է, թե ինչու այս պարզ շիլայի արտադրությունը մեզանում չի կազմակերպվում: Գուցե դա ազդի իրոք անոնրմալ գնագոյացման վրա:

Համանման պատկեր է անցած աշնանից հայաստանյան շուկայում արձանագրվող խնձորի վաճառքի հարցում: Ինչ-ինչ պատճառներով, որտեղ շրջանառվում է նաեւ կարկտաբեր ամոթը ընդամենը մի 15 որոշ ուշացումով գրելու զրույցը, խնձորի հիմնական այգետերը զրկվեցին բերքից: Բնական է՝ պակասը լրացնել էր պետք, եւ ՀՀ առեւտրային ցանցում հայտնվեցին արտերկրների գեղեցիկ ու հյութալի խնձորի տեսակներ, 1 կգ-ն առաջարկելով 1400-1800 դրամով: Հանրության որոշ հատվածը օգտվում է այս պտղից, որոշակի մասը նայում է գնին ու լավագույնը բավարարում երեխայի կամ հիվանդի ցանկությունը, մնացյալն իրեն սփոփում՝ թե խնձորն առաջին անհրաժեշտության սնունդ չէ: Նայելով Գրաց քաղաքի սուպերմարկետներում այս ապրանքի գնին, դարձյալ գալիս եմ այն եզրակացության, որ ՀՀ ներմուծումներ իրականացնողները խնձորի առաջարկվող տեսակներին ձեռք են բերել դրանց դիմաց բարձր գներ պահանջող երկրներում: Իսկ ահա Գրացի «Շպար» մարկետում օրեր առաջ ընտիր խնձորի կիլոգրամի դիմաց վճարեցի 62 ցենտ, «Բիլլա» սուպերմարկետի մրգերի բաժնի մի հատվածում մեծ արկղով խնձոր էր լցված, կողքին պլաստմասսայե 10 լիտր տարողության դույլեր: Հայտարարագրից պարզվեց, որ այն կարելի է լեփլեցուն լցնել՝ վճարելով 4,99 եվրո: Դույլը լցնելուց ու փորձնական կշռում իրականացնելուց հետո քաշը կազմեց 6 կգ 700 գրամ, 1 կգ-ի արժեքը՝ մոտ 80 ցենտ, դույլն էլ գնորդին նվեր: «Պենին» սուպերմարկետում խնձորը մի փոքր թանկ արժեր. կանաչ կեղեւով ջրալի ու քաղցր տեսակի այս պտուղը գնահատված է 99 ցենտ: Հիշատակված գներից մաքսելի խնձոր կարելի է ձեռք բերել շաբաթվա որոշակի օրերի քաղաքի տարբեր մասերում գործող բացօթյա շուկաներում, ուր վաճառք իրականացնողներն ընդգծված նշում են, որ իրենց վիրավորված կզգան, եթե երկիր այս մրգի տեսակելի ծավալի ներկրում իրականացվի: Հիշենք, որ Ավստրիան մի երկիր է, ուր 1 բնակչի հաշվով 1 հա տարածք կա, որի 1700 քառակուսի մետրը վարելահող, ճիշտ նույնքան, ինչքան մեր շատ ավելի

արեւաշող ու ոչ պակաս ջրառատ Հայաստանում: Մի փաստ նշեմ. հյուրնկալողներս իրենց այգու 40-ամյա 2 խնձորենիները կտրեցին, այդ տարածքում դնելով խնձորենու 4 նոր տնկիներ:

Տրամադրությունս ընկնում է ՀՀ-ում արձանագրվող գներից: Գրացում տեսածս մեկնաբանելու ցանկություն անգամ չեմ թողնում, ՀՀ տնտեսության պատասխանատու պարոնայք պաշտոնյաներ: Ասպարեզը ներմուծողներին թողնելով՝ 100-հազարավորների տխուր առօրյան մի օր էլ ձեր առջեւ է հայտնվելու: Այսօրվա ձեր պահվածքով այդ օրը մոտեցնելը երկիրը անցանկալի վիճակի առջեւ կկանգնեցնի:

ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ
Ավստրիա, Գրաց

Հարցազրույց

Եթե Եվրոտեսիլի ռինգում նոկաուտ եմ ուզում, իսկ տվեմ Հայաստանի օգտին

1-ին էջից

Էմմի- Քաղաքը շատ գեղեցիկ է, մեզ շատ լավ են ընդունում:Գերմանիայի շատ քաղաքներով եմ շրջել, բայց Դյուսսելդորֆում չէի եղել:

- Ստեղծվա՞ծ են այն պայմանները, որ արտիստը կարողանա առավելագույնս ներկայացնել իր կարողությունները:

-Ինձ թվում է Եվրատեսիլը հենց արտիստի համար է ստեղծված: Չնայած այն անվանում ենք երգի մրցույթ, բայց սա լավագույն հնարավորությունն է յուրաքանչյուր արտիստի համար ներկայանալու, մանավանդ փոքր երկրների համար: Սա մեզ համար պատուհան է դեպի մեծ հանդիսատես, մեծ հեռուստալսարան:

-Իսկ Դյուսսելդորֆի բեմը, փորձին հատկացվող ժամանակը բավարարո՞ւմ են:

-Մի քանի անգամ աշխատել եմ այսպիսի մեծ նախագծերում եւ անհնար է, որ ինչ-որ բան այն չլինի՝ լույսը, ձայնը: Բեռլինի Օլիմպիկ ստադիոնում ելույթ եմ ունեցել, չնայած որ բացօթյա էր, չնայած որ այն մեծ էր, բայց միեւնույն է՝ ձայնն այնքան լավ էր, որ ասես կոմպակտ դահլիճում երգեի: Դյուսսելդորֆի բեմը, լույսը, ձայնային հնարավորությունները անկրկնելի ու անփոխարինելի են: Մեր ելույթի ժամանակ ոչ մի ուրիշ պատվիրակություն իրավունք չունի դահլիճում գտնվել:

-Ո՛չ: Նախ Ադրբեջանի արտիստներին դեռեւս չեմ հանդիպել: Թուրքիայի ներկայացուցիչներին տեսել եմ. այնպես է ստացվել, որ մեր ելույթից անմիջապես հետո նրանց ելույթն է, ու կուլիսներում լսել եմ նրանց: Վրացիների հետ երեկ առաջին անգամ ենք հանդիպել, նրանց երեկույթն էր, մեզ էլ էին հրավիրել, շատ լավ անցավ:

-Ո՞ր երգերը կամ երգչին եք հավանում առաջին 19 մասնակիցների մեջ:

-Շատ եմ սիրում Շվեդիայի երգը՝ «Popular»: Երիտասարդը շատ ակտիվ է, երգն էլ բավականին հետաքրքիր երգ է, ինչը պետք է այսպիսի մրցույթում:

-Այսօր գերմանական թերթերը մատնեցին շոուի բովանդակությունը՝ «Հայաստանը բեմը «վերածել» է ռինգի»: Բեմում բռնցքամարտի մեծ, կարմիր ձեռնոց- աթոռ է, Էմմին՝ Արթուր Աբրահամի ռինգ մտնելու կարմիր խալաթով: Երգը նվիրված է մի հերոսի, որը բռնցքամարտի՞կ է, թե՞ բռնցքամարտիկ Արթուր Աբրահամին, նվիրված է մայիսի 14-ին նրա ռինգ դուրս գալո՞ւն, թե՞ արտահայտում է Ձեր սերը սիրված, հաջողակ բռնցքամարտիկի հանդեպ:

-Ձեր բոլոր թվարկածները՝ մի փաթեթում: Հետաքրքրվել ենք՝ Եվրոտեսիլի պատմության մեջ բռնցքամարտը թեմա չի եղել: Երգը նվիրված է թե՛ Արթուր Աբրահամին, թե՛ բռնցքամարտին, թե՛ 14-ի նրա մրցամարտին: Մեր հայրենակիցը, լինելով այդքան հանրահայտ, այդքան հաջողված մարզիկ, նաեւ հիանալի մարդ է: Նրան վաղուց եմ ճանաչում: Երգի տողերն են՝ You are the strongest fighter, you are the king for me ՝ դու ամենաուժեղ մարզիկ ես, դու թագավոր ես ինձ համար: Խորհուրդը որոշեց, որ Արթուր Աբրահամը կլինի մեր հերոսը: Դրանից հետո բանակցություններ եղան նաեւ Արթուրի հետ, եւ նա մեծ սիրով միացավ մեր զվարճանքին:

- Եվրոտեսիլյան ելույթը նվիրում եք Ձեր հայրիկի հիշատակին: Ինքը լսե՞լ էր այս երգը, կարծիքն ի՞նչ էր:

-Լսել էր բոլոր 4 երգերը, առանձնահատուկ գնահատական էր տալիս: Իր սիրած երգերից էր գերմանացի հեղինակի «Good bye» բալլադը: Գերմանացի պրոդյուսերները հեղինակի հետ միասին այստեղ իմ կատարմամբ պատրաստել են այդ երգի ձայնագրությունը, որ սկավառակում լինելու է մի քանի ուրիշ երգերի հետ: Այն, ինչ վերջին ամիսներին կատարվեց մեր ընտանիքում, ինձ հետ, եղավ այն ժամանակահատվածում, երբ ես պիտի ներկայացնեի ընտրված երգերը: Կարողացա կանգնել ու երգել, որովհետեւ պատրաստված եւ ուժեղ եմ, որովհետեւ գիտեմ, որ իմ ծնողներն ամենաբատն են ուզում ինձ այս բեմում տեսնել: Հայրս արդեն բավական երկար տարիներ ստիպ հետ կապված խնդիրներ ուներ եւ վիրահատություն անկարելի էր կատարել: Հասկանալով, որ ինձ ուժ է տալիս իմ պահապան հրեշտակը՝ իմ հայրը, որոշեցի նվիրել նրան բոլոր ելույթներս:

-Անցյալ տարի մրցույթին հայտ ներկայացրեցիք շնորհալի մի պարողի՝ Միհրանի հետ: Ինչո՞ւ 2011-ի այս նախագծում նա էլ չընդգրկվեց:

-Բանակցություններ տարվեցին Միհրանի հետ, նա ասաց, թե իր աշխատանքը կարող է պատկերացնել երկու երգի մեջ միայն, եթե «Բում-բումը» դրանց մեջ լիներ, նա այսօր այստեղ կլիներ ու Ձեր հարցերին էլ կպատասխաներ: Ցավում եմ, որ այս անգամ նա միայն հոգեպես է իմ կողքին լինելու:

-Ո՞ր երգը պիտի Էմմիին Emmy (ԱՄՆ-ում ամենանշանավոր հեռուստամրցանակը, որ տրվում է նաեւ վարիետեի, երաժշտության համար-Ան. Հ.) բերի:

-Իրականում Emmy-ն տրվում է սերիալների համար, ես ուզում եմ Grammy (երաժիշտ արվեստագետներին եւ ձայնագրող թիմին տրվող միջազգային ամենաբարձր պարգեւն է Լոս Անջելեսում-Ան. Հ.):

- Մայիսի 10-ին ի՞նչ եք ուզում հաղորդել մեր ընթերցողներին:

-Նախ ուզում եմ շնորհակալություն հայտնել նախորդ տարիներին Եվրոտեսիլի մասնակից արտիստների անունից մեր այն հայրենակիցներին, ում շնորհիվ Հայաստանը բարձր հորիզոնականներ գրավեց: Մեծ, հզոր Սփյուռքի ներկայությունը այսպիսի մրցույթներին բացահայտ երեւում է: Ուզում եմ խնդրել, որ նորից ակտիվ լինեն, օգնեն մեզ հայտնվել լավագույն հորիզոնականում:

Նադեժդա Սարգսյան

-Սա Ձեր հավանա՞ծ երգն էր:

-Եվրոտեսիլի ամենամեծ խնդիրը երգի ընտրությունն է, ոչ թե կատարողը կամ շոուն, թեպետ այդ բոլորը համալիր ընտրվում է: Բայց համենայնդեպս միշտ ուշադրություն են դարձրել՝ ինչ է ընտրում ժողովուրդը: Ի վերջո sms ուղարկում է ժողովուրդը: Եթե ես լինեի, կդնեի մի լավ ձայնային երգ, որովհետեւ գիտեմ Էմմիի տվյալները, կուզենայի որպես մայր եւ պրոդյուսեր ցուցադրել նրա ձայնային տվյալները, երգն այնքան թեթեւ է, կասկածում էի, որ դա են ընտրելու: Ստացվեց այնպես, որ թե ժյուրին, թե ժողովուրդն ընտրեց «Բում-բումը», որը բոլորի լեզվին, բոլորի ականջին է: Եվրոպական ժանրի մեջ է:

-Տեսե՞լ, լսե՞լ եք մյուս երկրների երգերը: Ո՞րն եք հավանում:

-Ճիշտն ասած, այս տարվա երգերը թույլ են: Ինձ դուր է գալիս Մեծ Բրիտանիայի Bleu-ն: Նրանց սիրում եմ, որովհետեւ նրանց ողջ ստեղծագործական կյանքը գիտեմ, նորից վերադառնում են ասպարեզ:

-Դյուսսելդորֆը, գերմանացիների կազմակերպած ծրագիրը ի՞նչ տպավորություն թողեց:

-Ինձ համար Գերմանիան մի ուրիշ երկիր է: Դասական արվեստը, երգեցողությունը, որակն է գնահատվում: Մեր լավագույն երաժիշտներից շատերն են Գերմանիայում: Շատ եմ ուրախանում, որ մեր երեխաներին գնահատում են:

Գոհար Գասպարյան

- Հայաստանի մասնակցության օրվանից Եվրոտեսիլի պատվիրակության կազմում լինելով կարո՞ղ եք համեմատել՝ Դյուսսելդորֆում ինչպե՞ս են պատրաստվել: Արտիստներին ավելի լա՞վ հնարավորություն են տվել լավագույնս արտահայտվելու:

-Վաս երեւալու մասին դեռ վաղ է խոսել: Բոլոր աշխատանքները պրոցեսի մեջ են: Իսկ համեմատական տանելու դեպքում գերմանական ճշգրտությունը, ճշտապահությունը իր դրական կողմը ունի: Շատ կազմակերպված է, տարբերությունը կարող եմ ասել միայն դահլիճի մեջ է, որովհետեւ նախորդ տարիներին եղել են համերգային դահլիճներ հիմնականում, այս տարի ֆուտբոլի դաշտ է, որը փակվում է եւ վերածվում է համերգայինի: Այսինքն՝ ահռելի մեծության դահլիճ է սա եւ այդ մեծությունը ենթադրում է կանոններ, ոճային փոփոխություն, բեմը լինելու է նախորդ տարիներից շատ տարբեր, իսկա background ենք տեսնելու՝ LED-ային, լուսային էֆեկտներով:

-Հայաստանը պատրա՞ստ է արագ փոփոխությունների:

-Երբ աշխատում ես պրոֆեսիոնալների հետ, ամեն ինչ անում են, որ մարդիկ իրենց լավ զգան: Մեծությունը, չափսերը կաղ չունեն, այստեղ ամեն ինչ արված է պրոֆեսիոնալ ձեւով եւ մենք միայն սովորում ենք, ամեն ինչ շատ զարգացած է՝ թե՛ տեխնիկապես, թե՛ աշխատելու ոճը: Եվ այս տարի շատ բան ունենք վերցնելու, որովհետեւ դեկտեմբերին մեզ մոտ լինելու է մանկական Եվրոտեսիլը եւ մեր պատվիրակության անդամների մեջ էլ կան մարդիկ, որոնք հենց մանկականի պատասխանատուներն են, բոլորս այստեղ կարծես մի մեծ պրակտիկ դասընթաց ենք անցնելու: Շատ կարեւոր է սա մեզ համար: Շատ լավ է ամեն ինչ կազմակերպված. իհարկե տարբեր մանրուքներ կան, բայց լուծումներ գտնվում են: Բոլորը շատ բարեհամբույր են: Դեռեւս դժգոհություն եղել է միայն եսեւի background-ի հետ կապված: Հիմա աշխատում ենք այդ պրոցեսի վրա, որ կարողանանք շոուն ավելի դինամիկ ու պայծառ սարքել:

-Նկատե՞լ եք՝ թե գերմանացիներն ավելի պատրաստակամ են Հայաստանի պատվիրակության հանդեպ, քանի որ Դուք իրենց դրոշի տակ հանդես եկող բռնցքամարտիկ Արթուր Աբրահամի համերկրացիներն եք:

-Դեռեւս երբ Աբրահամի գաղափարը չկար, իրենք էլի պատրաստակամ են եղել, այսինքն դրանից չէր, որ ավելի ջերմ դարձան: Բայց ինչ խոսք, երբ Արթուր Աբրահամ ես ասում, բոլորի դեմքին ժպիտ է հայտնվում: Շատ պատշաճ են ընդունում յուրաքանչյուր հյուրի:

-Այն, որ Արթուրը ներկա չի լինելու Դյուսսելդորֆում, քանի որ եզրափակիչ փուլի օրը ռինգ է դուրս գալու, տրամադրության վրա ինչ-որ ձեւով ազդո՞ղ գործոն է:

- Կուզենայինք որ լիներ, բայց փոխարենը ողջ էներգետիկան մենք կփոխանցենք իրեն, ինքը՝ մեզ, հաղթական տրամադրությամբ:

-Ինչո՞ւ ընտրվեց բռնցքամարտը:

-Որովհետեւ երգը «Բում-բում» է կոչվում, ինչը սովորաբար ասոցիացվում է հարվածների հետ: Ուրեմն նաեւ՝ բռնցքամարտ, որ երբեք չի եղել Եվրոտեսիլում: Իսկ Եվրոտեսիլում շատ լավ են ընդունվում նորությունները, եւ քանի որ Գերմանիայում է, ինչու չէ՝ կարող է նաեւ Արթուր Աբրահամը լինել, տեսնենք, թե ինչ կստացվի այս գաղափարից:

-Ո՞ւմ եք ձեռնոց նետում:

-Բոլոր մրցակիցներին:

-Գոհար, իսկ Ձեր կարծիքով ո՞վ է Հայաստանի ամենաուժեղ մրցակիցը:

-Ես այստեղ միայն մի մրցակից եմ տեսնում՝ մեծբրիտանական Blue խումբը: Մյուսները հավասար դիրքերում են՝ մեկը նոր է, մյուսը՝ հին, բայց բոլորը մեկ մրցակից ունեն՝ աշխարհահռչակ Blue խումբը: Բոլորս եղել ենք նրանց երկրպագուները, բայց դա չի նշանակում, որ միայն նրանց ենք ձեռնոց նետում, որովհետեւ Եվրոտեսիլում չգիտես, թե ով կհաղթի, կարող է նույն Blue-ն, ինչպես Պատրիսիա Կասը, մնա 10-յակից դուրս: Այնպես որ բում պիտի անենք Եվրատեսիլի բեմում եւ փորձենք բոլոր մրցակիցներին թողնել մեզնից հետո:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Դյուսսելդորֆ, Գերմանիա

«Հրանտ Դինքի» անվան այգի Մերսինում

Բացման հանդիսավոր արարողությանը մասնակցել է նաեւ Ռաֆել Դինքը

Մերսինը Միջերկրական ծովում Թուրքիայի կարեւորագույն նավահանգիստն է: Ըստ երեւույթին քաղաքը զգալիորեն բնակեցված է քրդերով, որ քաղաքաթես Ֆազըլ Թուրքը ոչ միայն քրդական «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցությանն է ներկայացնում, այլեւ՝ ազգությամբ քուրդ է: Հենց նրա նախաձեռնությամբ էլ Մերսինում քաղաքաթեսարանը Հրանտ Դինքի անունով նոր այգի է հիմնել, որի կենտրոնում տեղադրվել է մեր հանգուցյալ հայրենակցին խորհրդանշող հուշարձան, իսկ բացման հանդիսավոր արարողությունն, ըստ «Էվրենսել» լրատվական գործակալության, տեղի է ունեցել մայիսի 8-ին:

Արարողությանը Մերսինի քաղաքաթեսի, կաթոլիկ եւ ուղղափառ եկեղեցիների ներկայացուցիչների հետ մասնակցել են Հրանտ Դինքի այրին՝ Ռաֆելը, դուստրը՝ Դելալը, «Ակօսի» գլխավոր խմբագիր Ռոբեր Քոփթաշը, «Ենի Շաֆաքի» հեղինակներից Ալի Բայրամօղլուն, «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցության խաղաղային վարչության ղեկավար Զիհան Յըլմազը, «Աշխատանք, ազատություն եւ ժողովրդավարություն» բլոկի պատգամավորության թեկնածու Էրթուղլու Քյուրքյուն, քաղաքական, հասարակական եւ արվեստի բազմաթիվ գործիչներ, ինչպես նաեւ հոծ բազմությունը:

«Էվրենսելի» վկայությամբ, արարողության բոլոր մասնակիցների կրծքին ամրացված է եղել Հրանտ Դինքի լուսանկարը: Հատկապես ուշադրություն է հրավիրել այգու հարեւանությամբ՝ բարձրահարկ շենքի պատին ամրացված Դինքին պատկերող հսկա ցուցապաստառն ու ցուցապաստառի «Միջագետքի քաջարի զավակ, քուրդ ժողովուրդը թեզ չի մոռանալու» մակագրությունը:

Արարողության բացման խոսքում Մերսինի քաղաքաթես Թուրքն ասել է. «Այգին կոչելով Հրանտ Դինքի անունով, հավերժացնում ենք չարաճճիգ դավադրության զոհը դարձած մեր եղբոր անունը: Պայքարելու ենք այն արժեքների համար, ինչպիսիք են խաղաղությունը, ժողովրդավարությունը, իրավահավասարությունը, հանուն որոնց սպանեցին Հրանտ Դինքին: Հայ, թուրք, քուրդ, հավասացյալ-անհավաս, բոլորս հավասար ենք: Մութ ձեռքերն այս երկրում աշխատում են, որ ծիլեր չտան խաղաղության եւ ազատության սերմերը, բայց ապարդյուն: Այս ճանապարհի հիմնաքարերը Հրանտ Դինքի պես անուններն են»:

Քյուրքյուն շարունակել է. «Մենք պարտք ունեինք հայ ժողովրդի եւ մեր եղբոր՝ Հրանտ Դինքի առջեւ: Որքան էլ ցավալի էր, այդ պարտքը ո՛չ այս պետությունը, ո՛չ էլ այս պետության իշխող տարրերն են կատարում, այլ նրանց փոխարեն ծագումով քուրդ քաղաքաթեսը: Այսինքն՝ հայերի դեմ իրականացրած բռնությունների համար ներողություն խնդրելու պարտականությունը Թուրքիայում բնակվող ժողովուրդների անունից ստանձնել է քուրդ ժողովուրդը: Թուրքիան պարտավոր է առերեսվել իր պատմության հետ եւ ընդունել իրողությունը»:

Այնուհետեւ այգու ժապավենը «Կեցցե՜ ժողովուրդների եղբայրությունը» կարգախոսով քաղաքաթեսի հետ կտրել են Ռաֆել Դինքը, Դելալ Դինքը, Բայրամօղլուն, որին հետեւել է այգում տեղադրված եւ Հրանտ Դինքին նվիրված հուշարձանի բացումը, իսկ արձանի քողը Ռաֆել Դինքն է միայն իջեցրել:

Հ. ՉԱՔԲՅԱՆ

Շոտլանդիայում բացարձակ իշխանության եկան ազգայնականները

Շոտլանդիայում տեղի ունեցած տեղական խորհրդարանական ընտրություններում իր պատմության մեջ առաջին անգամ Շոտլանդիայի ազգայնական կուսակցությունը հաղթանակ տարավ: Ազգայնական կուսակցությունը, ստանալով Հոլիռուդի (Շոտլանդական խորհրդարանը) 129 մանդատներից ավելի քան 70-ը, այժմ, կրկին պատմության մեջ առաջին անգամ, կձեւավորի Շոտլանդիայում միկուսակցական կառավարություն: Կուսակցության առաջնորդ Ալեքս Սելմոնդը ընտրություններն անվանել է «պատմական», շեշտելով, որ առաջիկա 5 տարիների ընթացքում Շոտլանդական խորհրդարանը կանցկացնի Մեծ Բրիտանիայից անկախության հանրաքվե: Հարկ է նկատել, որ Շոտլանդիայի ազգայնական կուսակցությունը մշտապես հանդես է եկել Բրիտանիայից անկախության օգտին: Ուշագրավ է նաեւ, որ Շոտլանդիայում տեղի ունեցած նաեւ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում նույնպես հաղթանակել են ազգայնականները: Իսկ պարտված՝ առայժմ իշխող կոալիցիայի մաս կազմող լիբերալ-դեմոկրատների առաջնորդ Նիկ Քլեգը ընտրությունների արդյունքները որակել է «շատ եւ շատ վատ»: Իր հերթին ազգայնականների առաջնորդ Սելմոնդը նախքան ընտրությունների արդյունքների հրապարակումը հայտարարել էր, որ հաղթանակի պարագայում իրենք անպայման անցկացնելու են Շոտլանդիայի անկախության հանրաքվե: Սելմոնդը կոնկրետացրել էր, որ առաջին հերթին իրենք պահանջելու են «Շոտլանդական խորհրդարանի համար մեծ տնտեսական ազատություն եւ եկամտահարկերը սահմանելու համար իրավունքի տրամադրում»: Արդեն հաղթանակից հետո Սելմոնդը նշեց. «Շոտլանդացի ժողովուրդը վստահություն հայտնեց մեզ, այժմ մենք պետք է վստահենք մեր ժողովրդին: Հենց այս պատճառով մենք խորհրդարանի լիազորությունների առաջիկա հինգ տարիների ընթացքում կանցկացնենք հանրաքվե՝ Շոտլանդիայի ժողովրդին տալով հնարավորություն որոշելու երկրի սահմանադրական ապագան»: Հատկանշական է, որ Սելմոնդը, նախքան ընտրությունները Շոտլանդիայի առաջին նախարարի պաշտոնն էր զբաղեցնում, սակայն նախկինում երբեք «չէր համարձակվում» երկրում անցկացնել անկախության հանրաքվե: Ընդ որում, ընտրություններից առաջ էլ Սելմոնդը բազմիցս հանդես է եկել հայտարարություններով, որ հաղթանակի պարագայում չի շտապելու հանրաքվե անցկացնելու հարցում. «Ամենակարեւոր խնդիրը տնտեսական ճգնաժամի հաղթահարումը պետք է լինի», ասում էր ազգայնական Սելմոնդը: Ուշագրավ է, որ բրիտանական կենտրոնական իշխանությունները բավական հանգիստ են տրամադրված այս իրադարձությունների առումով: Մասնավորապես Միացյալ Թագավորության Շոտլանդիայի հարցերով նախարար Մայքլ Մուրը հայտարարել է, որ Մեծ Բրիտանիան չի խոչընդոտնի Շոտլանդիայում հանրաքվեի անցկացմանը. «Մենք չենք խոչընդոտելու, մենք պետք է խթանենք անկախության հարցի քննարկումը», հայտարարել է նախարարը:

Ինչեւէ. կբերի՞ արդյոք ազգայնականների հաղթանակը Շոտլանդիային անկախության ու դրանով իսկ Բրիտանիայի պառակտմանը, հազիվ թե, քանի որ արդեն մի քանի հարյուրամյակ Շոտլանդացիները միայն խոսում են անկախության մասին՝ ոչ ավելին: Բացի դրանից՝ որոշ փորձագետներ համոզված են, որ եթե նույնիսկ Շոտլանդիայում անցկացվի անկախության հարաքվե, ապա առաջին հերթին տնտեսական շահերով առաջնորդվող բնակչության մեծ մասը դեմ կքվեարկի: Մյուս կողմից էլ, սակայն, Շոտլանդիայի ողջ պատմության ընթացքում աննախադեպ է, որ որեւէ կուսակցություն ընտրությունների արդյունքում խորհրդարանում ձեւավորի այսքան խոսուն մեծամասնություն: Ազգայնական կուսակցությունը հիմնադրման 1934-ից, երբեք չի դիտարկվել Շոտլանդիայում որպես իրական քաղաքական ուժ: Նշենք, որ շոտլանդական ինքնավարության հարցը սկսվել է 1707-ից, երբ Անգլիայի եւ Շոտլանդիայի միջեւ ակտ ստորագրվեց, որով Շոտլանդիան որոշակիորեն անցավ Անգլիայի «խնամակալության տակ»: Հատկանշական է, որ այսօր էլ Շոտլանդիայում կան մարդիկ, որոնք, ինչպես եւ շոտլանդացի հայտնի գրող Ռոբերտ Բեռնսը, վստահ են, որ այդ ակտը ստորագրած շոտլանդացիների նկատմամբ գործադրվել են լուրջ ճնշումներ: Փաստորեն, առայժմ միանշանակ դժվար է պատասխանել հարցին, ո՞ւր կտանի Շոտլանդիային Ալեքս Սելմոնդը, եւ արդյո՞ք կհետեւեն նրան շոտլանդացիները: Միանշանակ է միայն, որ առաջիկա առնվազն 5 տարիների ընթացքում, մինչ Շոտլանդիայում կիշխեն ազգայնականները, Եվրոպայում մենք ականատես կլինենք՝ ազգերի ինքնորոշման իրավունքի իրացման վերաբերյալ գոնե խոսակցությունների:

Հ. ԱՓՅԱՆ

ՏՐԻՊՈԼԻ

Լիբիական զորքը վերսկսել է Միսուրատայի ռմբակոծությունը

Այս ամիս Քադդաֆին չի երեւացել

Լիբիայի կառավարական զորքերը մայիսի 8-ի երեկոյան վերսկսել են պաշարված Միսուրատա նավահանգստային քաղաքի ռմբակոծությունը, հաղորդում է Ֆրանսպրեսը: Մայրաքաղաք Տրիպոլիից 200 կմ արեւելք գտնվող Միսուրատայի զգալի մասը (ներառյալ նավահանգիստը) մնում է ապստամբների ձեռքին:

Թեեւ մայիսի 4-ին նավահանգիստը վերսկսել էր նավթի ընդունումը, շարունակվող գնդակոծումների պայմաններում մարդասիրական օգնություն ստանալը անչափ դժվար է: Ապստամբների հայտարարության համաձայն, քաղաքում մնում է ջրի եւ պարենի մեկամսյա պաշար:

Ապստամբներն իրենց թեթեւ հրազենով դժվարությամբ են դիմակայում կառավարական զորքերի տանկերին ու տեխնիկային: Չնայած բազմաթիվ խնդրանքներին, դեռ ոչ մի պետություն չի համաձայնել զենք մատակարարել ապստամբներին: Քադդաֆիի զորքը երեկ ռմբակոծել է Միսուրատայի նավահանգիստը եւ որոշ նավթապահեստներ:

Ինչ վերաբերում է Լիբիայի ղեկավար Մուամմար Քադդաֆիին, նա այս ամիս դեռ չի երեւացել հանրությանը: Մայիսի լույս 1-ի գիշերը ՆԱՏՕ-ի օդուժի ռմբակոծությունից զոհվեցին Քադդաֆիի կրտսեր որդի Սեյֆ ալ Արաբը եւ թոռներից երեքը: Դրանից հետո Քադդաֆին հեռուստաելույթ չի ունեցել եւ նույնիսկ որդու թաղմանը չի մասնակցել: Օտարերկրացի դիվանագետները չեն բացառում, որ նույն ռմբակոծության հետեւանքով նա վիրավորված կամ նույնիսկ սպանված լինի: Իտալական «Լա Ստամպա» թերթը գրում է, որ եթե Քադդաֆին ռմբակոծության պահին եղել է նույն շենքում, ապա դժվար թե անվնաս մնար: Եթե նա իրոք վիրավորված կա սպանված է, ապա վերջին օրերին ո՞վ է ղեկավարում ապստամբների դեմ ուղղված հարձակողական գործողությունները, ո՞վ է փախստականներին ուղարկում Իտալիա: Ինչպես դիվանագիտական աղբյուրները, այնպես էլ ապստամբները ենթադրում են, որ Քադդաֆիին փոխարինում է նրա իրավահաջորդը դարձած որդին՝ Սեյֆ ալ Իսլամը:

Չեյնին կոչ է անում վերսկսել կտտանքները

ԱՄՆ նախկին փոխնախագահ Ռիչարդ Չեյնին վարչակազմին կոչ է արել վերականգնել հարցաքննությունների վարման «կատարելագործված» մեթոդները, ներառյալ ջրային կտտանքները: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը:

«Ֆոքս Նյուզ» հեռուստալիքին երեկ տված հարցազրույցում Չեյնին հայտարարել է, որ նման մեթոդների կիրառումը նպաստեց «թիվ 1 ահաբեկիչ» Ուսամա բեն Լադենի ոչնչացմանը: Նախկին փոխնախագահի խոսքերով, «Ալ Ղաիդայի» առաջնորդի հետքը հաջողվեց գտնել Ջորջ Բուշի որդի հարցաքննության կոշտ ձեւերով հատուկ ծառայությունների հայթայթած տվյալների միջոցով:

Լրագրողի այն հարցին, թե Չեյնին անհրաժեշտ համարո՞ւմ է արդյոք նման մեթոդների թույլատրումը հույժ կարեւոր գերիների հարցաքննության ժամանակ, նա պատասխանել է. «Անձամբ ես լիովին կողաշտանների նման առաջարկությունը»:

Բարաք Օբաման 2009-ին արգելեց հարցաքննությունների վարման «կատարելագործված» մեթոդների կիրառությունը: Նախագահ Օբամայի խոսքերով, նման միջոցները փաստորեն կտտանքներ են եւ դուրս են Ժնեւի կոնվենցիայի շրջանակներից:

Ուսմանովը եւ Աբրամովիչը Բրիտանիայում ամենահարուստների եռյակում են

Ռուսաստանցի գործարարներ Ռոման Աբրամովիչը եւ Ալիշեր Ուսմանովը «Սանդեյ թայմս» թերթի կազմած վարկանիշներով հայտնվել են Մեծ Բրիտանիայի ամենահարուստ մարդկանց եռյակում: Այդ մասին հաղորդում է BBC-ն:

Ցանկում ընդգրկված 1000 անձանց ընդհանուր կարողությունը գնահատվում է 395,8 մլրդ ֆունտ ստեռլինգ (գրեթե 650 մլրդ դոլար):

Երկրում ամենահարուստ անձը առաջվա պես պողպատաձուլական մագնատ Լակշմի Միտտալն է: Ֆինանսական ճգնաժամի հետեւանքով նրա կարողությունը նվազել է 1/5-ով եւ այժմ գնահատվում է 17 մլրդ ֆունտ (մոտ 27,9 մլրդ դոլար):

Ամենահաջողակ գործարար է ճանաչվել Մեծ Բրիտանիայում բնակվող ռուսաստանցի Ալիշեր Ուսմանովը: «Մետալլոինվեստի» հիմնադիրը մեկ տարում 6 աստիճանով բարձրացել է եւ ներկայումս 2-րդ տեղն է զբաղեցնում ամենահարուստների ցանկում: Նա փաստորեն կրկնապատկել է իր հարստությունը, որն այժմ գնահատվում է 12,4 մլրդ ֆունտ (ավելի քան 20 մլրդ դոլար):

3-րդ տեղում Չուկոտկայի նախկին նահանգապետ Ռոման Աբրամովիչն է, որն անցյալ տարի զբաղեցնում էր 2-րդ տեղը: Ներկայումս նա ունի 10 մլրդ ֆունտ (մոտ 16,4 մլրդ դոլար):

Բնիկ բրիտանացիների մեջ ամենահարուստը Վեստմինստերի դուքսն է, որը կալվածատեր է եւ այժմ ունի 7 մլրդ ֆունտ (մոտ 11,5 մլրդ դոլար):

Մեծ Բրիտանիայում միլիարդատերերի թիվը 1 տարում 53-ից հասել է 73-ի: 1000 ամենահարուստ բրիտանացիներից 108-ը կանայք են:

ՀՐԱՇԱՄԱՆՈՒԿ

Արեւիկ Իվանյանի մենահամերգը նվիրված սիրելի ուսուցչին

Այսօր Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցի մեծ դահլիճում կկայանա 13-ամյա ջութակահար Արեւիկ Իվանյանի համերգը, որը նվիրվում է Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր Արտաշես Մկրտչյանին: Արեւիկը հինգ տարեկանից սկսել է ջութակ նվագել Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցում, իր մոր՝ Մարիամ Իվանյանի դասարանում: 2004-ին, երբ Արեւիկը 6 տարեկան էր, առաջին մրցանակի է արժանացել Էմին Խաչատրյանի անվան պատանի ջութակահարների հանրապետական մրցույթում, իսկ մեկ տարի անց՝ դափնեկրի կոչման Սպենդիարյանի անվ. հանրապետական մրցույթ-փառատոնում: 2007-ին Արեւիկը կրկին մրցանակների է արժանացել Ավետ Գաբրիելյանի եւ Սարգիս Ասլամազյանի անվան մրցույթ-փառատոներում: Անցած տարի 12-ամյա՝ արդեն ճանաչված ջութակահարը մեկամսյա վարպետության դասեր է առել Լոնջիի (ԱՄՆ, Քեմբրիջ) երաժշտանոցում (պրոֆեսոր Մարկ Լակիրովիչի դասարան):

Հայ-ավստրիական երաժշտական փառատոնի շրջանակներում նա վարպետության դասեր է առել նաեւ ավստրիացի ջութակահար Գեորգ Համմանից եւ մասնակցել փառատոնի եզրափակիչ համերգին: Արեւիկը մենահամերգներով հանդես է եկել Երեւանում, Վանաձորում, Բոստոնում: Նա նաեւ Սայաթ-Նովայի անվան երաժշտանոցի նվագախմբի 13-ամյա կոնցերտմայստերն է:

Առաջիկայում բարդ ու դժվարին մրցույթի է մասնակցելու Արեւիկ Իվանյանը: Դա Իտալիայի Կրեմոնա քաղաքում հուլիս ամսին անցկացվող Անտոնիո Ստրադիվարիուսի ֆոնդի կողմից կազմակերպվող ջութակահարների մրցույթն է, որի 2-րդ եւ 3-րդ փուլերին մասնակցելու համար Արեւիկ Իվանյանը հաղթահարել է 1-ին նախընտրական փուլը ու հիացրել մասնագիտական ժյուրիին:

Արեւիկ Իվանյանի այսօրվա մենահամերգում կհնչեն Բախի, Մոցարտի, Տարտինիի, Պագանինիի եւ Վենյավսկու ստեղծագործությունները՝ Ալինա Հակոբյանի նվագակցությամբ: Նշենք, որ երաժշտագետները մեծ հույսեր են կապում դեռատի ջութակահարի հետ:

Մաղթենք Արեւիկ Իվանյանին նորանոր հաղթանակներ:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

Տիգրան Պետրոսյանցի նոր աշխատությունների շնորհանդեսը

Կան անհատներ, որոնց ինքնությանը ծանոթանալիս հարգանքն ու պատկառանքն են համակում քեզ: Դրանց շարքում իր տեղն ունի վաստակաշատ մատենագետ, լրագրող, պատմաբան, Արցախյան հերոսամարտի մասնակից Տիգրան Հայազնը (Տիգրան Պետրոսյանց): Մայիսի 6-ին Ավ. Իսահակյանի անվան գրադարանի լեփ-լեցուն դահլիճում հավաքվել էին Տիգրան Պետրոսյանցի դասընկերները, աշխատանքային ու մարտական ընկերները, գրչընկերներն ու բարեկամները, նշելու Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի գիտական գրադարանի տնօրեն Տիգրան Պետրոսյանցի 60-ամյակը եւ մասնակցելու նրա վերջին երեք՝ «1000 հայազգի գեներալներ, ծովակալներ», «200 հայ զորավարներ» եւ «Վարդենիս» գրքերի շնորհանդեսին: 37 գրքերի ու գրքույկների, 100-ից ավելի գիտական հոդվածների, 1000-ից ավելի այլ հոդվածների հեղինակ Տիգրան Հայազնը հաստիկ առ հաստիկ հավաքել եւ թղթին է հանձնել հայազգի 1295 գեներալների, զորավարների, ծովակալների կենսագրականները տարբեր ոլորտներից: «Այդ գրքերից երկուսը, ինչպես «**Ազգի**» հետ զրույցում ասաց Պետրոսյանցը, «իմ նվիրումն է Հայկական բանակին, իսկ մեկը՝ իմ հարազատ ծննդավայր Վարդենիս գյուղին: Երեքն էլ հանրագիտարանային տիպի գրքեր են եւ իրենց մեջ կրում են գիտելիք եւ տեղեկություններ 34 երկրում 1000-ից ավելի գեներալական աստիճան ստացած հայազգի մարդկանց մասին: Իսկ «200 հայ զորավարներ» շարքը իր մեջ ընդգրկում է Հայկ Նահապետից առ մեր օրերը հայ զորավարների մասին տեղեկություններ:

Այդ օրը հոբելյարին շատերը շնորհավորեցին, ուղերձներ, պատվոգրեր ու նվերներ հանձնեցին: Իսկ գեներալ-գնդապետ Գուրգեն Դալիբալթյանը բարձր գնահատանքի խոսքեր հնչեցրեց Պետրոսյանցի անցած մարտական ուղու համար եւ հույս հայտնեց, որ հոբելյարից շատ բան ունեն սովորելու մեր երիտասարդները եւ բանակում եւ կյանքում: Մեկ տասնյակ հուշամեդալներից, պատվոգրերից ամենաարժեքավորը ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի հրամանագրով՝ բանակ-հասարակություն կապն ամրապնդելու գործում ունեցած ներդրման, ինչպես նաեւ ծննդյան 60-ամյակի առթիվ, պահեստազորի փոխգնդապետ Տիգրան Մնացականի Պետրոսյանցը պարգեւատրվեց «Գարեգին Նժդեհ» մեդալով:

Պետրոսյանցի գրական ու ստեղծագործական ուղին ներկայացրեց պրոֆեսոր Սուրեն Դանիելյանը:

«**Ազգը**» միանում է շնորհավորանքներին:

Մ. Մ.

Ճշգրտում

Յարգարժան խմբագրություն,

Գոնէ Ձեզի համար պէտք է ծանօթ ըլլայ, որ LA Times ամենամեայ գրքի փառատօնի հիմնումէն իվեր, այստեղի «ԱՊՐԻԼ» գրախանութը (Յարութիւն Երէցեանի նախաձեռնութեամբ, հիմա ալ իր որդւոյն՝ Առնոյի կազմակերպութեամբ) առանց բացառութեան մասնակցած է այդ երկօրեայ միջոցառման: Եւ ամէն տարի քանի մը հեղինակ հրաւիրած անձամբ ներկայ ըլլալու, հանդիպելու փառատօնը այցելողներուն եւ մակագրելու իրենց գրքերը:

Ուրեմն, առաջին հայկական ներկայութիւնը չէ այս տարուանը:

Ձեր թղթակիցը առնուազն նշելու էր այս աննախադէպ երեւոյթը:

Մնամ Ձերդ՝

ԵՐՈՒԱՆԴ ԳՈՉՈՒՆԵԱՆ

Գլենդեյլ, ԱՄՆ

Արվեստի զարնանային ստուգատես

Ապրիլի 27-ին Երեւանի Հովհաննես Թումանյանի թանգարանի ցուցասրահում բացվեց հայ կերպարվեստի միջին եւ, համեմատաբար, կրտսեր սերնդի ներկայացուցիչներից հինգ արվեստագետների աշխատանքների ցուցահանդեսը: Հինգն էլ տարբեր բարձրագույն կրթօջախների գեղարվեստի բաժնի նախկին սաներն են, իսկ այժմ՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գեղարվեստի ֆակուլտետի դասախոսներ. Արա Հակոբյան՝ դոցենտ, արվեստի պատմության տեսության եւ մշակութաբանության ամբիոնի վարիչ, Լիլիթ Ֆլջյան՝ գեղարվեստի ֆակուլտետի դեկանի տեղակալ, Արթուր Մարտիրոսյան՝ գեղանկարչության ամբիոնի դոցենտ, Սոս Հարությունյան՝ գծանկարի ամբիոնի դասախոս, Վահրամ Հակոբյան՝ գեղանկարչության ամբիոնի դասախոս: Արվեստասերի ուշադրությանը եւ դատին ներկայացան հինգ անհատականություններ, որոնք թեեւ այս պարագայում հնգյակով են հանդես գալիս, սակայն համակցական ստեղծագործական մեկ ամբողջ, այսինքն՝ տանդեմ չեն կազմում. յուրաքանչյուրը բացահայտում է իր սեփական դիմագիծը եւ աշխատելաոճը: Էքսպրեսիոնիստական սկզբունքը ընդգծում է հենց այս հանգամանքը. յուրաքանչյուր նկարիչ զբաղեցնում է պատի հարթության միայն իրեն հատկացված տարածքը՝ կարծես ընդգծելով սեփական ինքնավարությունը: Հետեւությունն այն է, որ նկարիչները ընկերակցում են, բայց չեն ազդում մեկը մյուսի վրա՝ հարգելով յուրաքանչյուրը մյուսների ստեղծագործական տիրույթները: Այսքանով հանդերձ մեկ ընդհանրություն հարկ է նշել. այն, որ քնքշանքի, սիրո, փութաջանության, բարոյակերտ վարվեցողության եւ պրոֆեսիոնալիզմի շունչն է իշխում սրահի մթնոլորտում, որից եւ դժվար չէ հասկանալ, որ ստեղծագործողները մանկավարժներ են բառիս լավագույն իմաստով:

Նկարիչներից երեքը աչքի են ընկնում առավել գեղանկարչական ընկալումներով, մինչդեռ երկուսը՝ գրաֆիկական, գծային մտածողության տեր են: «Գեղանկարչական» հասկացողությունը ինքնին եւս միատարր հասկանիք չէ. այն բազմաշերտ է, բազմաբովանդակ, բազմորակ, մանավանդ արվեստի ժամանակակից զարգացման փուլում եւ առանձնակի՝ ազգային դպրոցի դրսեւորումներում:

Ասածի ներքո դիտարկենք հնգյակի ամենակրտսեր ներկայացուցչի՝ գեղանկարիչ **Արա Հակոբյանի** երփնագրերը: Ժանրի եւ թեմատիկայի առումով արվեստագետի ստեղծագործություններն ընդգրկուն են՝ ներառելով թե՛ բնաբրտակեր, նատյուրմորտ, դիմանկար, եւ թե՛ քաղաքային եւ գյուղական մոտիվներ, թե՛ ջրային տարերքի երփնագրում, եւ թե՛ լեռների պատկերում: Մոտիվները եւ ժանրերը բազմազան են, բայց կարեւոր եւ դոմինանտ գիծը չեն Արայի նկարներում: Մոտիվը լոկ պատրվակ է պատկերվող օբյեկտը ներգրավելու համընդհանուր գունեւանգային միջավայր, նրբերանգային գոտի, թրթռներով եւ թափանցիկ կիսատվերներով հագեցած մթնոլորտ, ուր որեւէ գույն, շնչավոր կամ անշունչ առարկա մեկուսի գոյություն չունի, ուր ամենը փոխանդադարձի մեջ է եւ, հետեւաբար, մեկը մյուսին անփակելիորեն աղերսված է: Այստեղից էլ Արայի նկարների ձգտումը ժանրերի եւ մոտիվների սինթեզման, ինչը թե շատ ցանկանանք, կկոչենք թեմատիկ կոմպոզիցիա, իսկ եթե ավելի համարձակ լինենք, կանվանենք գեղանկարչական քնարերգություն: Չափի առումով ոչ մեծ, բայց շատ ընդգրկուն նկարներից յուրաքանչյուրը հենց այդպիսին է. «Վենետիկ», «Անձրեւոտ օր», «Լռություն», «Գարունը եկավ», «Երեկոյան զեփյուռ», «Ջմեռ Ճամբարակ գյուղում», «Քրիզանթեմներ», «Պարտ իր գյուղում» եւ ուրիշներ: Նշենք, որ թեմատիկայի սինթեզմանը լավագույնս նպաստում է երփնագրած հարթությունների գունաբարային սինթեզը. երկրի, երկնքի եւ երկուսի միջեւ հայտնված լեռների, ծառերի, շենքերի կամ մարդկանց հատվածներն ընդգրկված են միեւնույն կոլորիտային շրջապտույտի մեջ: Պատկերի յուրաքանչյուր հատվածում խտանում են ամբողջի օրինաչափական կանոնները: Այս հանգամանքը գեղանկարչական գործերին առավել բարձր որակ է հաղորդում: Արայի արվեստում սինթեզման սկզբունքը ծայրաստիճան գործուն է նաեւ ենթագիտակցորեն ներկրած ազդեցությունների առումով: Նկարիչը յուրացրել է հայ ռեալիստական արվեստի մեծանուն վարպետների նվաճումները. այնպիսիք, ինչպիսիք են Սեդրակ Առաքելյանը, Փանոս Թերլեմեզյանը, Ստեփան Աղաջանյանը, ծովանկարիչ Վարդան Մախոխյանը: Յուրացրել է նաեւ իմպրեսիոնիզմի կնիքը կրող վարպետների աշխատելաոճը՝ Վահրամ Գայֆեջյան, Կարապետ Ադամյան: Կոլորիտային լուծումներում զգացվում է նաեւ Կորովինի եւ Գրաբարի որակները: Բոլոր ազդեցությունները, այդուհանդերձ, այնքան են տեղայնացված, որ դիտողը նկարներում տեսնում է ոչ թե նշվածներից որեւէ մեկին, այլ հենց իրեն՝ Արային: Հակոբյանի արվեստը ճշմարիտ է, համոզիչ, ազնիվ, զուսպ, բայց՝ գեղանկարչորեն հագեցած: Արայի արվեստի առանձին վերլուծությունը մեծ ծավալ կզբաղեցնի եւ սա մեր խնդիրը չէ, պարզապես ամփոփելով նշենք, որ բնատուր օժտվածությունը, երբ հղկվում է, սրբագրվում եւ նիստերով հարստանում, դառնում է ընդունելի, հարազատ եւ սիրելի ընկալողի համար:

Ստեղծագործությունը՝ Սոս Հարությունյանի

Շարունակելով դիտարկումը՝ նշենք, որ Արա Հակոբյանի արվեստին հակոտնյա է գեղանկարիչ **Արթուր Մարտիրոսյանի** ստեղծագործական ջիղը: Բնատուր գեղագիտական հայեցողությունը հակում է նկարչին առավել մեծադիր գեղանկարչական մակերեսների, որոնցում նա չափավոր հարթադեկորատիվ լեզվամտածողության գունեղ պատկերներ է ստեղծում: Նկարիչը վրձնում է մեծ կտորներով՝ կողք կողքի դնելով հակադիր գույներ՝ չմոռանալով, այդուհանդերձ, տոնային ելեւէջների մասին: Ստեղծագործություններում պատկերված է հայոց բնաբխարհը իր կտրուկ դիմագծով, լեռնային գոտուն հատուկ օդի եւ արեւի սարսուռը կարծես հենց իրենով պայմանավորում է այն մոնումենտալ եւ «շնչակտուր» ընկալումը, որը տիրում է կտավներում եւ որը ներազդելու մեծ կարողություն ունի: Որոշ գործերում այդ զգացողություններից ներշնչված՝ բնությունը կարծես դառնում է անողորմ, կտրուկ եւ, նույնիսկ, պարտադրող: Պատահական չէ, որ նկարիչը հակված է ձմեռային պատկերների, այն էլ լեռնային գոտու ձմեռներին, որոնք երբեք չեն շփոթի հարթավայրային ձյունածածկ տարածքների հետ: Արթուր Մարտիրոսյանը բազմիցս է ներկայացել անհատական ցուցահանդեսներով հայրենիքում եւ արտերկրներում: Եվ այս ցուցադրումը եւս մեկ առիթ է հաստատելու նրա ստեղծագործական հավատամքը:

Լիլիթ Ֆլջյանը ներկայացել է մանրանկարչական եւ գեղանկարչական աշխատանքներով: Նկարչուհու գողտրիկ բնաբպատկերների շարքը կատարված է ռեալիստորեն ճշմարիտ եւ համոզիչ ընդհանրացումների լեզվով: Փոքր չափի գեղանկարչական աշխատանքներում գրավչականն այն է, որ նատուրալիստական եւ որեւէ գծի եւ բծի հետք չկա: Հայ կերպարվեստում որպես օրենք չորությունը եւ նատուրալիզմը ի հայտ են գալիս այն կտավներում, որոնցում պատկերված են եկեղեցիներ: Լիլիթի պարագայում պատկերն այլ է. կոլորիտի ամենահարուստ ելեւէջումների եւ ընդհանրացումների շնորհիվ հայոց սրբավայրը դառնում է ընդհանրական կերպար, որը համազոր է հուզական հոգեվիճակի: Հենց այդպես էլ կոչվող «Սրբավայր» կոմպոզիցիայում նկարչուհու էսթետիզմը, գունեւանգների համակցման վարպետությունը ասելիքին խորություն եւ ճշգրտություն են շնորհում:

Սոս Հարությունյանը գեղանկարիչ ու գծանկարիչ է: Գծանկարչական գործերում հետաքրքրական են կոմպոզիցիաների «այլաբանումները», գծի ճկունությունը, պատկերվածի պայմանականությունը, հատկանիշներ, որոնք դուրս են բերում ստեղծագործողի արվեստը ավանգարդի ոլորտ: Գունանկարները օժտված են գծային հատկանիշներով եւ նրանցում այլեւս այլաբանական շերտավորումները այդչափ գործուն չեն, որքան գծանկարում: Նկարիչը փորձում է իրեն տարբեր որակներում եւ տարբեր ոլորտներում, ինչը ինքնատիպության դրվատելի է:

Վահրամ Հակոբյանը ամբողջովին ներփակված է կուբոֆուտուրիզմի սահմաններում: Պատկերվող բոլոր իրավիճակները, միջավայրը, իրերը տրոհված են ստրուկտուրալ մասնիկների եւ հետո կամայական, բայց տրամաբանորեն պատճառաբանված կերպով հավաքված, սինթեզված են ճանաչելի կերպարում: Գեղանկարչական հարթությունները լայնածավալ են եւ առավելապես գծապատկերային: Սա ստեղծագործական անհատականության ինքնատիպ դրսեւորում է, որն, անշուշտ, հարուստացնում է գեղարվեստական միջավայրի դիտահայեցողականությունը:

Ցուցահանդեսի բացմանը ներկա էին մեծ թվով ուսանողներ, անվանի արվեստագետներ, արվեստաբաններ, որոնք մեկ անգամ եւս համոզվեցին, որ նման ստուգատեսներ անհրաժեշտ են բոլորին՝ թե՛ դիտողին եւ թե՛ ստեղծագործողին:

ՎԱՐԴԻԹԵՐ ԳԱՄԱՂԵԼՅԱՆ

արվեստաբան

Արոնյանը դուրս մնաց հավակնորդների մրցաշարից

Կազանում ընթացող շախմատի աշխարհի չեմպիոնի տիտղոսի հավակնորդների մրցաշարում ավարտվեց քառորդ եզրափակիչ փուլը: Լեւոն Արոնյանի եւ Ալեքսանդր Գրիշչուկի մրցավեճի ելքը վճռվեց լրացուցիչ մրցախաղում, քանի որ դասական շախմատի 4 պարտիաներում էլ մրցակիցները խաղաղ դաշն էին կնքել: Ընդ որում, 1-ին եւ 3-րդ պարտիաներում սպիտակներով խաղացող Արոնյանը վերջնախաղում 1 զինվոր ավելի ուներ, սակայն երկարատեւ պայքարից հետո սպիտված էր բավարարվել ոչ-ոքի արդյունքով: Իսկ սեւերով Արոնյանը կարճատեւ պայքարից հետո հաշտություն կնքեց մրցակցի հետ: 2-րդ պարտիան ավարտվեց 22-րդ քայլին, իսկ 4-րդ պարտիայում մրցակիցները հաշտության ձեռք մեկնեցին արդեն 17-րդ քայլին:

Որքան էլ որ ցավալի է, սակայն Լեւոն Արոնյանին չհաջողվեց լրացուցիչ մրցախաղում առավելության հասնել մրցակցի նկատմամբ: Արագ շախմատի առաջին պարտիայում նա սպիտակներով 47-րդ քայլին հանձնվեց: Հաջորդ պարտիայում արդեն սեւերով Արոնյանը հաղթանակ տոնեց 72-րդ քայլին՝ հավասարեցնելով հաշիվը: 3-րդ պարտիան 61-րդ քայլին ավարտվեց ոչ-ոքի: 4-րդ՝ վճռորոշ պարտիայում սպիտակներով խաղացող Գրիշչուկին հաջողվեց ուժեղ գրոհ ձեռնարկել մրցակցի արքայական թեւում, որի արդյունքում Արոնյանը սպիտված էր 49-րդ քայլին ընդունել իր պարտությունը:

Այսպիսով, լրացուցիչ մրցախաղում Գրիշչուկին զիջելով 1,5-2,5 հաշվով, Լեւոն Արոնյանը, որին համարում էին հավակնորդների մրցաշարի հաղթողի հիմնական թեկնածու, դուրս մնաց հետագա պայքարից:

Կիսաեզրափակիչում Գրիշչուկը կմրցի Վլադիմիր Կրամնիկի հետ, որն արագ շախմատի բոլոր 4 պարտիաներն էլ Թեյմուր Ռաջաբովի հետ ավարտեց ոչ-ոքի: Կայծակնային մրցախաղի առաջին 2 պարտիաներում կողմերը մեկական հաղթանակ տոնեցին: Իսկ 2-րդ մրցախաղի 2 պարտիաներն էլ ավարտվեցին Կրամնիկի հաղթանակով: Կիսաեզրափակիչի առաջին պարտիաները կանցկացվեն մայիսի 12-ին:

Չորս մրցախաղերից 2-ում կիսաեզրափակիչի մասնակիցներին որոշելու համար բավարար եղավ դասական շախմատի մրցաշարը: Շատերի համար անսպասելի ԱՄՆ-ի չեմպիոն Գասա Կամսկին պարտության մատնեց բուլղարացի գրոսմայստեր Վեսելին Թոփալովին: Մրցակիցների մրցավեճում վճռորոշ էր 2-րդ պարտիան, որում Կամսկին հաղթանակ տոնեց: Մյուս 3 պարտիաներն ավարտվեցին ոչ-ոքի: Ընդ որում 4-րդ պարտիայում Թոփալովն արդեն 5-րդ քայլին նորույթ կիրառելով, զգալի առավելություն էր ստացել, սակայն այդպես էլ չկարողացավ հաղթել:

Կիսաեզրափակիչում Կամսկին կմրցի Բորիս Գելֆանդի հետ, որը 2,5-1,5 հաշվով հաղթեց Շահրիյար Մամեդյարովին: Այստեղ էլ վճռորոշ եղավ 3-րդ պարտիայում Գելֆանդի տարած հաղթանակը: 4-րդ պարտիայում, երբ թվում էր թե սեւերով խաղացող Մամեդյարովը խաղը սրելու հնարավորություն է ստացել, 24-րդ քայլին ադրբեջանցի շախմատիստն առաջարկեց ոչ-ոքի, որն անմիջապես ընդունվեց Գելֆանդի կողմից:

Գոլազուրկ ոչ-ոքի առաջատարների մրցավեճում

8-րդ տուրի հանդիպումներով մեկնարկեց ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնության 2-րդ շրջանը: Հետաքրքրական է, որ գրանցված արդյունքները ոչ մի փոփոխություն չմցրին մրցաշարային աղյուսակում: Մասնակից բոլոր թիմերը մնացին իրենց տեղերում:

Մեծ հետաքրքրությամբ էր սպասվում առաջատարների՝ «Ուլիսի» եւ «Գանձասարի» հանդիպումը, որում հաղթանակի արժեքը շատ մեծ էր: Սակայն սպասված դիտարժան խաղը չստացվեց: Երկու թիմերն էլ շատ զգույշ էին գործում եւ հիմնական ուշադրությունը բեւեռել էին սեփական դարպասի պաշտպանությանը: Ուստի գոլային պահերը շատ քիչ էին: Խաղասկզբում կարող էր աչքի ընկնել ուլիսցի Ռենատոն, սակայն չկարողացավ գրավել դարպասը: 2-րդ խաղակեսում էլ գոլային պահերը չհրացրին ուլիսցիներ Արսյոմ Ադամյանն ու Շոթա Ջիքիան, ինչպես նաեւ գանձասարցի Վիրգին Մարտավելան: Արդյունքում դարպասները մնացին անառիկ:

Երկրի չեմպիոն «Փյունիկին» ընթացիկ մրցաշրջանում դժվարությամբ են միավորները տրվում: «Իմպուլսի» հետ սեփական հարկի տակ անցկացած խաղում էլ հաշվի մեջ 2-0 հաշվով առջեւում լինելով, «Փյունիկը» չկարողացավ հաղթանակ տոնել: Խաղասկիզբը շատ լավ դասավորվեց «Փյունիկի» համար: Արդեն 8-րդ րոպեին Էդգար Մանուչարյանը աջ թեւից ոչ ուժեղ, բայց դիպուկ հարվածով գրավեց Մայիս Ազիզյանի պաշտպանած դարպասը: 19-րդ րոպեին գեղեցիկ գոլի հեղինակ դարձավ Մարկոսը՝ կրկնապատկելով հաշիվը:

Թվում էր, թե փյունիկցիները կզարգացնեն հաջողությունն ու նույնիսկ խոշոր հաշվով կհաղթեն: Սակայն թիմը կարծես հանգստացավ ձեռք բերածով, թուլացրեց ճնշումը մրցակցի դարպասի վրա: Իրենց հերթին դիլիջանցիները զգալիորեն ակտիվացան եւ ի վերջո մինչեւ ընդմիջման գնալը Հովհաննես Գոհարյանը կրճատեց հաշիվը: Իսկ 2-րդ խաղակեսում անկյունայինի խաղարկումից հետո Ջուլիանո Հիմենեսը վերականգնեց հավասարակշռությունը: Խաղն ավարտվեց ոչ-ոքի՝ 2-2: Նշենք, որ անցյալ տարի էլ «Հանրապետականում» այս թիմերի մրցավեճն ավարտվել էր 3-3 հաշվով, ընդ որում խաղի ընթացքում «Փյունիկը» հաղթում էր 3-1 հաշվով:

Մեծ հետաքրքրություն էր ներկայացնում նաեւ Իջեւանում կայացած «Շիրակ»-«Միկա» հանդիպումը: Մայիսի 11-ին այս թիմերը վիճարկելու են Հայաստանի գավաթը, ուստի առաջնության մրցախաղը վճռորոշ հանդիպումից առաջ ուժերի վերջին ստուգատեսն էր: Ավելի հաջողակ գտնվեցին շիրակցիները, որոնք Մկրտիչ Նալբանդյանի խփած միակ գոլի շնորհիվ հաղթեցին:

Խաղից հետո թիմերի մարզիչները հետեւյալ կարծիքն են արտահայտել.

Ֆելիքս Խոջոյան («Շիրակ»)- Շատ դժվար հանդիպում ստացվեց: Խոտածածկի վատ վիճակն էլ ավելի էր դժվարացրել ֆուտբոլիստների գործը: Առաջին խաղակեսում մրցակիցը կարող էր հաջողության հասնել, եթե հաջող չխաղար մեր դարպասապահը: 2-րդ խաղակեսում առավելություն ունենք եւ կարողացանք հաղթել: Առջեւում գավաթի եզրափակիչն է: «Միկան» հզոր թիմ է ու լրջորեն պետք է նախապատրաստվենք հանդիպմանը, որպեսզի կարողանանք հաղթել: Անդրանիկ Բարիկյանին հանգստանալու հնարավորություն էինք տվել, քանի որ նա 5 դեղին քարտ ուներ եւ զգուշացվելու դեպքում պիտի սպիտված կլիներ բաց թողնել եզրափակիչը:

Արմեն Շահգելդյան («Միկա»)- Նման վատ խոտածածկի վրա հնարավոր չէր կոմբինացիոն խաղ ցուցադրել: Շնորհավորում եմ «Շիրակին»: Կատարենք, որ գավաթի եզրափակիչում այս ամենը չկրկնվի: Հիմնական կազմի 5 խաղացողների եզրափակիչից առաջ հանգիստ էինք տվել:

«Բանանցը» որոշ ընդմիջումից հետո կրկին մրցակիցներին հյուրընկալում է սեփական մարզադաշտում, որը վերակառուցումից հետո շուտով ավարտական տեսք կունենա: «Արարատի» հետ խաղում թիմը խաղադաշտ էր դուրս եկել նոր գլխավոր մարզչի՝ Ռաֆայել Նազարյանի գլխավորությամբ: Վերջինիս նորամուծը հաջող ստացվեց: «Բանանցին» վերջապես հաջողվեց առաջնությունում անդրանիկ հաղթանակը տոնել (2-1): Հետաքրքրական է, որ բոլոր գոլերն էլ խփվեցին անկյունային հարվածների խաղարկումից հետո: «Բանանցից» 2 անգամ աչքի ընկավ Արարատ Առաքելյանը, արարատցիներից միակ գոլը խփեց Խորեն Վերանյանը:

Մրցաշարային աղյուսակ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Ուլիս	8	5	2	1	13-5	17
2. Գանձասար	8	4	4	0	8-3	16
3. Փյունիկ	8	4	2	2	13-9	14
4. Միկա	8	3	2	3	9-7	11
5. Իմպուլս	8	3	2	3	11-10	11
6. Շիրակ	8	2	3	3	7-9	9
7. Բանանց	8	1	3	4	9-14	6
8. Արարատ	8	0	2	6	4-17	2

Ռմբարկուները

Մարկոս Պիզելի	«Փյունիկ»	4
Գեորգի Կրասովսկի	«Ուլիս»	3
Արսյոմ Ադամյան	«Ուլիս»	3
Բրունո Կորեա	«Բանանց»	3
Ջավեն Բադոյան	«Իմպուլս»	3
Անդրանիկ Բարիկյան	«Շիրակ»	3
Էդգար Մանուչարյան	«Փյունիկ»	3
Նարեկ Բեգլարյան	«Միկա»	3

ԲՈՆՅԵԱՄԱՐՏ

Կարո Մուրադը նվաճեց չեմպիոնի տիտղոսը

Հայ պրոֆեսիոնալ բոնցքամարտիկ Կարո Մուրադը նվաճեց կիսածանրքաշային կարգում IBF Intercontinental-ի վարկածով չեմպիոնի թափուր տիտղոսը: Գերմանիայի Նոյբրանդենբուրգ քաղաքում կայացած մենամարտում նա տեխնիկական նոկաուտով 11-րդ ռաունդում հաղթեց Օշիս Գրիֆինին:

Դա պրոֆեսիոնալ ռինգում Կարո Մուրադի 25-րդ հաղթանակն էր անցկացրած 26 մենամարտերից: Նրա մրցակիցը 34-րդ մենամարտն էր անցկացնում: Դրանցից 23-ում Գրիֆինը հաղթել է, 8-ում պարտվել է, 2-ն ավարտել է ոչ-ոքի:

Մելքումյանն անդրանիկ պարտությունը կրեց

Սարաեւոյում ընթացող շախմատի մրցաշարում 5 տուրից հետո Հրանտ Մելքումյանը 12 միավորով ընթանում է 5-րդ տեղում: 4-րդ տուրում Հրանտը շարունակեց հաղթարշավը՝ պարտության մատնելով թուրք էմրե Կանին: Իսկ ահա հաջորդ տուրում հայ շախմատիստի հաղթարշավն ընդհատեց խորվաթ Իվան Սարիչը՝ պարտության մատնելով մրցակցին: Այդ հաղթանակի շնորհիվ Սարիչը 15 միավորով միանձնյա գլխավորեց մրցաշարային աղյուսակը: 13-ական միավորով նրան հետաքնդում են Արկադի Նայդիչը եւ Բայադուր Ջոբավան: 6-րդ տուրում Մելքումյանը սեւերով կխաղա քաթարցի Մոհամեդ Ալ Սայեդի հետ:

Էլինա Դանիելյանի գերազանց մեկնարկը

Թբիլիսիում ընթացող շախմատի Եվրոպայի կանանց անհատական առաջնությունում բավական հաջող են մեկնարկել Հայաստանի ներկայացուցիչները: 2 տուրից հետո նույնքան միավոր էին վաստակել Էլինա Դանիելյանը, Լիլիթ Մկրտչյանն ու Լիլիթ Գալոյանը:

Էլինան հաղթանակներ է տոնել ադրբեջանցի Նիզամի Կազիմովայի եւ Իտալիան ներկայացնող Օլգա Զիմինայի նկատմամբ: Մկրտչյանը մրցաշարը սկսեց թուրք Բեթյուլ Յիլդիզի եւ սերբ Անժելիկա Ստոյանովիչի նկատմամբ տարած հաղթանակներով: Լիլիթ Գալոյանն էլ պարտության մատնեց ադրբեջանցիներ Նարմին Խալաֆովային եւ Սաբինա Իբրահիմովային: Աննա Հայրապետյանը ոչ-ոքի խաղաց Անաստասիա Բոդնարուկի եւ Աննա Շարեւիչի հետ: Նելլի Աղինյանը մեկնարկում պարտվեց Տատյանա Կոսինցեւային, հաջորդ տուրում առավելության հասավ Լիկա Կոբեշավիձեի նկատմամբ:

Լիա Մարտիրոսյանը, Անահիտ Խառատյանն ու Սիրանուշ Ղուկասյանը մեկնարկային 2 տուրերում ընդամենը կես միավոր էին վաստակել: Անհաջող մեկնարկեց Մարիա Գեւորգյանը՝ պարտվելով Մարիա Լոմինեյշվիլուն եւ Ինգա Խուրցիլավային:

3-րդ տուրում Լիլիթ Մկրտչյանն ու Լիլիթ Գալոյանն արդեն 10-րդ քայլին միմյանց հետ հաշտություն կնքեցին: Էլինա Դանիելյանը 60-րդ քայլին պարտության մատնեց Նինո Խուրցիձեին՝ տոնելով 3-րդ անընդմեջ հաղթանակը: Առաջին հաղթանակը տոնեց Մարիա Գեւորգյանը՝ պարտության մատնելով Լիզի Տրապիձեին: Աննա Հայրապետյանն էլ հաղթեց Զոյա Սեւերյուխինային:

Սիրանուշ Ղուկասյանը հաշտություն կնքեց Մերի Ժորժոլիանիի հետ, իսկ Նելլի Աղինյանը, Անահիտ Խառատյանն ու Լիա Մարտիրոսյանը պարտվեցին:

3 տուրից հետո էլինա Դանիելյանը նույնքան միավորով Նադեժդա Կոսինցեւայի, Վիկտորիա Ջմիլիտեի եւ Բելա Խոթենաշվիլու հետ գլխավորում է աղյուսակը: Լիլիթ Մկրտչյանն ու Լիլիթ Գալոյանը 2,5-ական միավորով առաջատարներին հետապնդողների թվում են: Այսօր կայանալիք 4-րդ տուրում էլինա Դանիելյանը սեւերով կխաղա Բելա Խոթենաշվիլու հետ:

Եզրափակեցին աղյուսակը

Թենիսի Հայաստանի կանանց հավաքականը Կահիրեում ընթացող ֆեդերացիայի գավաթի խաղարկության ավարտական խաղում էլ անհաջող հանդես եկավ՝ 0-3 հաշվով զիջելով խմբի առաջատար Բոսնիայի ընտրանուն: Առաջինը կորտ դուրս եկած Նունե Խաչատրյանը 4-6, 2-6 հաշվով պարտվեց Ժասմին Կայտազովիչին: Իսկ ահա Անի Ամիրաղյանը բավական լուրջ դիմադրություն ցույց տվեց Էմմա Բուրգիչին: Առաջին խաղափուլում զիջելով 4-6 հաշվով, Անին 2-րդում հաղթեց (6-4): Վճռորոշ խաղափուլը եւս անհաշտ պայքարում անցավ: Հաջողությունն ուղեկցեց Բուրգիչին (6-4), որն էլ շահեց հանդիպումը:

Զուգախաղում Աննա Մովսիսյան-Օֆելյա Պողոսյան զույգը միեւնույն 1-6,1-6 հաշվով պարտվեց Բուրգիչ-Կայտազովիչ երկյակին:

Այսպիսով, Բ ենթախմբում եզրափակելով աղյուսակը, Հայաստանի կանանց հավաքականը դուրս մնաց եվրոաֆրիկյան գոտու 2-րդ խմբի մրցաշարից: Հաջորդ տարի մեր ընտրանին հանդես կգա 3-րդ խմբում:

Անհաջող մեկնարկ

«Աշխարհի երիտասարդ աստղեր» շախմատի միջազգային 10-րդ մրցաշարում, որը նվիրված է Վանյա Սոմովի հիշատակին, 12 մասնակիցների թվում է 16-ամյա ՖԻԴԵ-ի վարպետ Կարեն Գրիգորյանը: Նա իր վարկանիշով (2463) զիջում է միայն ռուսաստանցի միջազգային վարպետներ Ալեքսեյ Գոգանովին (2480) եւ Անդրեյ Ստուկոպինին (2471):

Կարենն անհաջող մեկնարկեց՝ զիջելով ռուսաստանցի ՖԻԴԵ-ի վարպետ Կիրիլ Ալեքսեենկոյին:

Ֆեստլի 3-րդ Գրան պրին

Թուրքիայում կայացած «Ֆորմուլա-1» դասի ավտոմրցավազքի աշխարհի առաջնության հերթական փուլն ավարտվեց Սեբաստիան Ֆեստլի հաղթանակով: 2-րդ տեղը գրավեց Մարկ Ուեբերը, 3-րդը Ֆեռնանդո Ալոնսոն էր: Ընթացիկ մրցաշրջանում դա Ֆեստլի 3-րդ Գրան պրին էր:

Աշխարհի ներկայիս չեմպիոնը 93 միավորով վստահորեն գլխավորում է աղյուսակը: 2-րդ տեղում Լյուիս Հեմիլտոնն է (59 միավոր), երրորդը եզրափակում է Մարկ Ուեբերը (55):

«Կոնստրուկտորների գավաթի» խաղարկությունում առջեւում է ընթանում «Ռեդ Բուլը» (148 միավոր): 2-րդ հորիզոնականը զբաղեցնում է «Մակլարենը» (105), 3-րդ տեղում «Ֆերարին» է (65):

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Օրվա հեսքերով

Մաքսիմ Հովհաննիսյան

Ազնվացնող ներկայություն

Ժամանակ առաջ Մաքսիմ Հովհաննիսյանը «13-ի» նամակն usnրագրողներից էր: Գուցե՝ համահեղինակը կամ վերջնական տեսքի բերողը: Ինքն այդ մասին ոչինչ չի ասում: Ուրիշներն էլ զլանում են:

Այդպես՝ շուրջ քառորդ դար՝ 1965-88 թվականներին ապրել, աշխատել, գրել է ՊԱԿ-ի եւ կուսակցական նոմենկլատուրայի աչալուրջ, ձվի մեջ մազ փնտրող հայացքի տակ: Եվ գործն usացվել է «փողի պար»: Այդ վերնագրով մի պատմվածք ունի:

Ասում է. «Գրականություն մտա շապկանց»: Բայց ճիշտ չէ: Ճշմարտության եւ ճշմարիտ խոսքի մասին երեք իմաստուն պատմություն է արել՝ իր 50-ամյակի օրը: Իրենց ազգի մեծ Սաքունց Բախշու կյանքն է, Գյուլի տաից usացած դասն ու մոր ազնվականությունը: Ջեմ պատմելու: Գրականություն է մտել բարոյականության այն պաշարով, որ ձեւակերպել է այսպես. «Մեծ քաջություն չէ հիվանդի երեսին ասել, որ դատապարտված է»: Ասել է. «Հիվանդ ես, բուժվիր»:

Հրանտ Մաթեւոսյանին հիշեցի. «Եթե ջրհեղեղը կրկնվեր... կարող էի երկրագիներիս վարից ժողովել մարդկային բարոյականության գիրքը»: Այսպես: Կամ՝ մոտավորապես այսպես են գրվել «Գյուղացի մարդիկ»-ը, «Նարնջագույն գիշերներ»-ը: Երկրի մասին: Երկրագիների մասին: «Մասին»-ը պայմանական համարենք: Իրականում ԵՐԿԻՐ է գրել: Եվ երկրագիներ է քանդակել՝ բնօրինակից:

Նրա գիրը, որքան էլ ժամանակները լղոզված, միշտ հարց, խնդիր ունեցել է եւ ունի: Նրա գործին բնաբան էր գալու Վահան Տերյանի «Օ՜, հայրենի՛ք, դառն ու անուշ» տողը: Ինքը, սակայն, մի փոքր գունավորում է եւ ասում, որ «ճշմարտությունը նման է ազնվացող հովասակի»: Անարժաններին թամբից ցած է շրտում: Այդպե՞ս է:

Մեծ հաշվով՝ գուցե: Բայց քանի՞ անարժան է ԵՐԿՐԻ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ «թամբել»: Իր տակը քաշել: Վերջին գրքում, որ «Հոգնած երեկո» է անվանել, Մաքսիմ Հովհաննիսյանը թռուցիկ պատմում է Սուջարով Սյոդպայի մասին՝ իր համադասարանցու: 88-ին ասել է. «Գերեզմանիս լուր կբերես»,- եւ փիլիսոփայի նման հեռացել:

Դարձյալ շուրջ քառորդ դար է անցել: Ինքը Սուջարով Սյոդպային ասելի՞ք ունի: Լուր տալու բա՞ն ունի: Լուր տալու բան ունի՞: Հարցականի տեղը դարձյալ փոխենք՝ լուր տալո՞ բան ունի: Կամ՝ լո՞ւր տալու բան ունի:

Ամեն ինչ իմաստավորվում է նրբերանգների մեջ: Սահմանը, միջակայքը ո՞րն է: Գրականությո՞ւնը: Գրողի խո՞սքը: Գրողի՞ խոսքը: Բայց գրողն ո՞վ է: Փո՞ղ ունի: Նրա հրամանին բանա՞կ է կանգնած: Պետական չինովնիկությունը նրա՞ն է ունկնդիր: Ոչ մեկը, ոչ մյուսը, ոչ երրորդը: Գրողն ընդամենը սրտի տագնապ ունի: Եվ՝ անհնություն: Որովհետեւ... Սարոյանի փոքրիկ հերոսն ասում է. «Ինչ-որ տեղ ինչ-որ բան սխալ է»: Եվ կյանքը երբեք խոսքի տեսքի չի գալիս: Կամ՝ «մեր վարքն, այնինչ, օսար ձիու պես մեր տակից փախչում է»:

Ինչպես որ վերջին գրքի հերոսուհու՝ Հեղուշի վարքը, որ լինելու էր տան խոնարհ հարս, ընդամենը՝ կին եւ մայր, բայց ԺԱՄԱՆԱԿԸ մեջքին է դրել «հարց լուծելու» պարսականություն: Կամ թե ինքն է այդ բեռը վերցրել ուսերին, որովհետեւ ամուսինը հրադադարից մի շաբաթ առաջ ականի է զարնվել եւ տանը հաշմանդամ նստած է:

Քաղքենին կասի. «Է, կյանք է, ամեն ինչ էլ կպատահի»: Եվ միջին-վիճակագորեն ճիշտ կլինի: Որովհետեւ ուրիշների ամուսին-գլխատերն առհասարակ չկա: Զոհվել է: Գրողի նրբացած «ֆիմֆը», մինչդեռ, այդ ՑԱՎՆ է ճաշակում՝ որ Հայկազը կա, բայց դե ինքն էլ գիտի, որ «չկա», Հեղուշն էլ գիտի, Հայկազի մայրն ու տան երեխեքն էլ գիտեն: Բայց հաշտվել- ապրում են: Ապրվում է: Ապրվո՞ւմ է:

Նկուղում, ռմբակոծությունների տակ ջահել աղջիկն արնաքամվում է, բայց դե պտուղը չի հեռացվելու: Որովհետեւ նա, ով «մեղքաներն» է, զոհվել է: Եվ երեխան պիտի ծնվի: Եղե՞լ է: Եթե չի էլ եղել, ապա անպայման կարող էր լինել: «Այս ժողովրդին հաղթել չի լինի»,- պաթետի՞կ է հնչում: Գուցե: Բայց մյուս դեպքում, ահա, դա ներկայանում է զույգ ոտքն անդամահատած Գրիշայի խոսքով, որ մտադիր է հին մեքենան հարմարեցնել ու ամեն ինչ սկսել նորից: Սա արդեն տեսել ենք: Տեսնում ենք:

Ինչո՞ւ է այդպես: Այդ բոլոր զրնգուն խոսքերից, հաղթանակների մասին միջինացված բնութագրումներից, ահա, գրողն ինչո՞ւ է նյութ ընտրել Հեղուշի «տակից փախած» վարքը, նկուղի աղջկա «ամոթը», Գրիշայի «իդեալիզմը», Վաղոյի «դասալքությունը»: Այդ «Ռազմաճակատում հարաբերական անդորր է» շարքը: Այդ «Ընկեր-պարոն գնդապետը»: Մյուսները: Գրեթե՝ ՈՂՋԸ:

Այդպես է, որովհետեւ այդ մասին է առհասարակ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Առօրյայում այդ մարդիկ «վիճակագրություն են ստեղծում»: Դարձյալ Հրանտ Մաթեւոսյանի օգնությանը դիմեմ, «դառնում են ֆոն»՝ ձախողակ գրողների գրքերում: Իսկ արդարացի եւ ազնիվ գրականությունը հենց նրանց է ճանաչում: «Դուք եք երկրի աղը»,-ինչպես Աստվածաշունչն է խսացրել:

Եվ, իհարկե, ինչպես դեռ չի եղել այնպես, որ երկրի աղը երկիր կառավարի, այնպես էլ այս դեպքում Մաքսիմ Հովհաննիսյանի հերոսները զուտ գրական- գեղարվեստական են:

Բայց եթե այդպես չլիներ ու չգրվեր «Սպիտակ ագռավներ» շարքը, որից մի հատված կարդում ենք վերջին գրքում, աշխարհը չափազանց միապաղաղ, Տերյանի ասած՝ «պրոտոկոլ»-ային կլիներ: Մի տեսակ՝ զորանոց՝ առավոտյան «պոդյոմ»-ից մինչեւ իրիկնային «օտբոյ»: Ինչպես կուզենային բոլոր կառավարիչները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, մինչդեռ, նրա համար է, որ կյանքը հանկարծ «չնորմավորվի»: Կյանքի միջին-վիճակագրականը գիտենք: Ամեն մեկս՝ յուրովի: ԳՐՈՂԻ առաքելությունը «նորման» հաղթահարելու, մեզ իր հայացքին բերելու, մեզ՝ մեզ ճանաչեցնելու մեջ է:

Հիսուն տարվա իր անաղարտ գրով Մաքսիմ Հովհաննիսյանն, ահա, այդ մեզ՝ մեզ ճանաչեցնելու գործին է: Եվ կարողացել ու կարողանում է: Քանի որ կյանքին ու բոլորիս անքեն է նայել: Եվ շարունակում է անքեն մնալ:

Դա ԵՐԿԻՐ ազնվացնող հայացք ու խոսք է, որ ունեցել է ի սկզբանե: Որովհետեւ ծնվել է ազնվական, ապրել ազնվական, խոսել ազնվական:

Մաքսիմ Հովհաննիսյանը «նյութ» չի փնտրում: Ինքը եւ «նյութ» է, եւ «գաղափար», եւ «պյուժե», եւ «հանգուցալուծում»: Քանի որ ինքը ԵՐԿՐԻ ՄԱՐԴ է ծնվել:

Այլ կերպ մենք թերի կլինեինք: Այլ դեպքում ժամանակը կմնար միջակայքի «ծղրտուն ոգեւորությանը»: Եվ չէր ասվի, որ «ինչ-որ տեղ ինչ-որ բան սխալ է»: Իսկ երբ չի ասվում, ամեն ինչ առհասարակ է խեղվում:

Սուջարով Սյոդպայի մասին ակնարկը կարծես գիշերային խոկում չէ միայն: Հայացք է, որպեսզի վաղը «գերեզմանին լուր տալու» բան լինի: Բոլորին: Եւ՝ ԵՐԿՐԻ անունից:

Այլապես կսացվի «ինքը կյանքս ինչի՞ անցավ»:

Այդպես չի լինի: Չի լինելու: Որովհետեւ Մաքսիմ Հովհաննիսյանից այդպես չի ասվում: Ընդհակառակը: Քանի որ Ստեփանակերտը նրա համար «Փակուղի մոլորակ» է, որտեղ կյանքն, իհարկե, առաջվանը չէ, բայց որտեղ հին օրերի հերոսներն արդեն ծնվում են իրենց որդիների, թոռների տեսքով եւ «մի պուտ արյունը» բավական է, որպեսզի «դուք չլինեք՝ ես Ղարաբաղ եկողը չեմ»-ը ինչի որպես «հաջորդ ամառ կրկնվելու է նույնը»:

Ոչինչ չեմ ասում: Կարդացեք «Հոգնած երեկո»-ն:

Ինչ լավ է, որ երեկոն է հոգնել: Եվ չի եղել ու չի լինելու «հոգնության երեկո»-ն:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Գրական-գեղարվեստական երեկո Նվիրված

Կիպրոսի Մելգոնյան կրթական հաստատության 85-ամյակին

Կազմակերպությամբ՝
1968 տարեշրջանի սաների

Բանախոսներ՝
Գրող՝ **Կարպիս Սուրենյան**
Շրջանավարտ՝ **Բյուզանդ Ագբաբյան**
Երկարամյա ուսուցիչ՝ **Սեպուհ Աբգարյան**

Հանդիսավար՝
Հեռուստամեկնաբան
Արթուր Բախտամյան

Ելույթ կունենա՝
Հայաստանի պետական կամերային երգչախումբը

Ղեկավարությամբ՝ **Ռոբերտ Մլքեյանի**

Տեղի կունենա Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը (Ավ. Իսահակյան, 1), չորեքշաբթի, մայիսի 18-ին, 2011թ., ժամը՝ 19:30-ին: Վերջում հյուրասիրություն

Մուտքն ազատ է

Այս հայտարարությունն ընդունել որպես անձնական հրավեր

Կարսի արձանն ուզում է Բեռլինում կանգնեցնել

Մայիսի 2-ին գերմանական «Շպիգելը» «Գերմանացիներն էլ պատասխանատվություն են կրում» վերնագրով հարցազրույց է տպագրել: Գերմանական պարբերականի զրուցակիցը բեռլինցի 51-ամյա գաստրոնոմ Ադնան Օրալն է, որ ցանկություն ունի Մեհմեդ Ֆսոյի Կարսի՝ «թուրք-հայկական բարեկամությանը նվիրված մարդասիրության հուշարձանը» Բեռլին բերել-տեղադրել: «Շպիգելի» ինչո՞ւ-ին Օրալը պատասխանում է. «Գտնում եմ, որ անտանելի է, երբ արվեստի գործը կառավարության ղեկավարի ձեռքի մի շարժումով կարող է հանվել»: Թե գործնականում ինչպե՞ս պիտի իրականացնի իր ծրագիրը, երբ խոսքը 35 մ բարձրությամբ եւ 300 տոննա կշռող արձանի մասին է, Օրալը պատասխանում է. «Մխ, երբ այս խնդիրը չափում ենք հայ ժողովրդի ճակատագրի հետ համեմատելով, այդքան էլ դժվար չէ»: «Հարմար տեղ գտե՞լ եք» հարցին բեռլինցի թուրք գաստրոնոմը պատասխանում է, թե սկզբում անձնական տարածքում կդնի, հետո պատասխանատուներին կհարցնի՝ թե կարո՞ղ են արժանի տեղ տրամադրել: «Վերջապես 1915-ին գերմանացիներն էլ թուրքերի միջոցով իրականացված Հայոց ցեղասպանության համար պատասխանատվություն են կրում», ասում է Ադնան Օրալը: «Այսինքն ինչպե՞ս», հարցնում է «Շպիգելի» թղթակիցը: «Ժամանակին գերմանացի սպաները Կոստանդնուպոլսում սուլթանի խորհրդատուներն էին եւ գերմանական ռայխը մեծ հետաքրքրություն ուներ, որ Թուրքիան անկայուն չդառնա: Բեռլինը ոչինչ չարեց հայերի սպանդը կասեցնելու համար», պատասխանում է Օրալը: «Ինչպե՞ս է ֆինանսավորելու»: «Անձնական եւ պատշոնական միջոցներով»: «Շատերն այդ արձանը գարշելի են համարում: Տեսե՞լ է այն»: «Ոչ, չեմ տեսել: Արվեստն ամենքին չպիտի դուր գա: Այն պիտի մարտահրավեր նետի»:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

Հ.Գ.- *Մեր վերոնշյալ լուրը ուրբաթ օրը դրվել էր «**Ազգի**» կայքէջում, իսկ նույն օրը «Հայլուր-սփյուռքը» նույն լուրը մի քիչ այլ ձեւով ներկայացրեց՝ մասնավորապես ծանուցելով, թե հայերը ֆինանսական մասնակցություն են ունենալու արձանը տեղափոխելու գործում: «Գունավորումը» հավանաբար թուրքական աղբյուրն է հավելել, գերմաներենում նման բան չկա:*

Տեղադրեք եւ ընթերցեք անվճար հայտարարություններ www.vdv.am կայքում

ԹԵՇՐԱՆ

Իրանում «մոգեր եւ կախարդներ» չկան

Օրեր առաջ Իրանում ձերբակալվեց նախագահ Ահմադինեժադի աշխատակազմի ղեկավարին մոտ կանգնած շուրջ 25 մարդ՝ «մոգություն եւ կախարդություն» մեղադրանքով: Խնդիրն առաջացավ, երբ Իրանում էկրան բարձրացավ իմամ Մահդիի հարության անխուսափելիության մասին ֆիլմը, իբր նշյալ պաշտոնյաները մոգություն են անում՝ իմամի հարությունն արագացնելու համար: Հետաքրքրական է, որ նախագահ Ահմադինեժադն ինքը հաճախ իր խոսքում մեջբերումներ է անում իմամից, իսկ 2009-ին մի առիթով նույնիսկ նշել էր, թե իմամ Մահդիի հարությանը խոչընդոտում է ԱՄՆ-ը: Ինչեւէ՝ այս «հեքիաթային» պատմության կարեւորությունը ամենեւին էլ ոչ միայն երկրի նախագահին մոտ պաշտոնյաների ձերբակալումն է: Խնդիրը այս իրադարձություններից հետո նախագահ Ահմադինեժադի եւ Իրանի հոգեւոր առաջնորդ այաթոլլահ Ալի Խամենիի միջեւ հարաբերությունների սրումն է: Մի քանի օր առաջ նույնիսկ արաբական որոշ աղբյուրներ նշեցին, թե այաթոլլահ, որն Իրանում ավելի մեծ իշխանություն եւ հեղինակություն ունի, քան նախագահը, պահանջել է Ահմադինեժադի հրաժարականը: Սակայն երեկ երկրի կառավարության նիստում Ահմադինեժադը հերքել է տեղեկությունը, թե կառավարական պաշտոնյաները զբաղվում են կախարդությամբ. «Եթե դա իրոք այդպես է, ապա ինչո՞ւ նրանք իրենց օգտին չեն կախարդում», նկատել է Ահմադինեժադը: Ի դեպ, Իրանի նախագահը հերքել է նաեւ իր «հակասությունները» երկրի հոգեւոր առաջնորդի հետ. «Ինչպես երկրի հոգեւոր իշխանությունը, այնպես էլ կառավարությունը իմամ Մահդիի նշած ուղու հոսքերդն է: Կառավարությունը ներդնում է բոլոր միջոցները, որ հետեւի այդ ուղղությանը՝ հանուն իսլամական հանրապետության զարգացման ու բարգավաճման», նշել է Մահմուդ Ահմադինեժադը՝ ըստ SalamNews կայքի:

Հ. Ա.

Կորել է

Աննա Ղազարյանի անձնագիրը՝ AF 0584064:
Համարել անվավեր:
Հեռ. 055-55-31-39:

«Էկոնոմիկա եւ Իրավունք» ամսագիր

Ինչպես անթերի վարել հաշվապահությունը եւ խուսափել հաշվապահական, հարկային եւ իրավաբանական սխալներից

▼ Օրենսդրական նորություններ - Պարզաբանումներ - Խորհրդատվություն

▼ «Էկոնոմիկա եւ Իրավունք» - ամսագիր ղեկավարների եւ մասնագետների համար

Բաժանորդագրվելու համար զանգահարեք 54-24-81, 54-74-81

Լրատուական գործունեությունն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, usnրագրված է տպագրության՝ 9.5.2011, գինը՝ 100 դրամ, տպագրվում է «Նոյեան Տաղան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: